

## ԿԵՆՏԱՂԱՅԻՆ ՍԿԱՎԱՌԱԿՆԵՐ

1

Երեսուն տարեկան մի մարդ, քայլելով Երևանի լայն ու բարեկարգ պողոտաներից մեկով, հասավ անկյունային բազմահարկ մի շենքի և կանգ առավ: Այդ շենքի կողքային ճակատը բացվում էր մի նեղ նրբանցքի վրա: Նույն այդ նրբանցքի վրա էր գտնվում նաև շենքի դարպասը:

Մարդը ձեռքը տարավ վերնաշապկի ծոցագրպանը, այնտեղից հանեց վրան հասցե գրած մի թերթիկ, նայեց, համեմատեց պատի վրա եղած հասցեի հետ: «Մուտքը նրբանցքից, բակից»,— կարդաց նա թերթիկի վրա:

Նոր Երևանում, իհարկե, նրբանցքները հազվադեպ են, բոլորը պողոտաներ են և փողոցներ: Եվ եթե հանդիպում են նրբանցքներ, ապա դրանք հին մնացորդներ են, որ վերացվելու են շուտով: Այդ նրբանցքը, որի վրա բացվում էր բազմահարկ շենքի կողքային ճակատը, նույնպես վերացվում էր աստիճանաբար, կարելի է ասել՝ արդեն գոյություն չունեի կիսով չափ: Այդ մեծ շենքի և նույն շարքի մյուս շենքերի պատի տակ զգված էր ասֆալտե լայն մայր: Ասֆալտապատված էր նաև կառուղին, որը սակայն ավելի նեղ էր, քան մայրը: Մյուս թևի վրա արդեն, մայր չկար: Կառուղին գնում դեմ էր առնում դիմացի միհարկանի կավե շենքերի պատերին, դրանց վաղուց արդեն խարխուլված հիմքերին: Պարզ էր, որ կառուղին լայնանալու էր այդ կողմից, այդ խրճիթների հաշվին՝ դրանց քանդելուց հետո: Իսկ մայրը զգվելու էր և շենքերը կառուցվելու էին այնտեղ, որտեղ այժմ այդ խրճիթների ներքին բակերն էին և պարտեզները:

Եվ իրոք, բազմահարկ այդ շենքի վերին հարկերի բնակիչներն արդեն հիմա, խրճիթների ցածրիկ, տափակ կտուրների վրայով, տեսնում էին բակերում բարձրացող խոշոր շենքերի առաջին հարկերը...

Մոտենալով դարպասին, մարդը նորից կանգ առավ, հասցեի թերթիկը դրեց գրպանը և այնտեղից հանեց մի ուրիշ թերթիկ: Դրա վրա գրված էր միայն երկու բառ. «Ավետիք, ընդունիր»: Կար նաև ստորագրություն, անընթեռնելի, որ նմանվում էր գլորվող անիվի՝ փոշու տուտը ետևից:

Թերթիկը դնելով մի այլ գրպան, որպեսզի կարողանա հարկավոր դեպքում առանց սխալվելու հանել այնտեղից, մարդը մտավ բակ:

— Ինչպե՞ս կարող է լինել այստեղ արհեստանոց, — համարյա բարձրաձայն, մտածեց նա:

Եվ իրոք, բակը սովորական բակ էր, բոլոր կողմերից այն շրջապատել էին բնակելի կորպուսներ: Առաջին բանը, որը ընկավ բակ մտնող մարդու աչքին, ավելի շուտ՝ ականջին, դա ֆուտբոլ խաղացող երեխաների ուրախ աղմուկն էր: Այդ մարդը, ֆուտբոլի խիստ սիրահար, կանգ առավ և սկսեց հետևել խաղին: Բայց ոչ այնքան խաղը հետաքրքրեց նրան, որքան այն անհամապատասխանությունը, որ կար բակի և ֆուտբոլային դաշտի ուղղությունների միջև:

Մինչդեռ բակը երկարությամբ ձգված էր դարպասից դեպի դիմացի կորպուսը, ֆուտբոլի դաշտը զծված էր ոչ թե դրան երկայնակի, այլ լայնակի: Գուցե դա նրա համար էր, որպեսզի ուժեղ խփված գնդակը դարպասով դուրս չթափվեր նրբանցք:

Գնդակը հանկարծ դուրս թռավ դաշտի սահմաններից և անհետացավ կորպուսներից մեկի կիսաբաց դռնով: «Ա՛՛՛՛՛՛՛՛», — լսվեց ինչ-որ հեռու տեղից, երկու տղաներ վազեցին գնդակը բերելու, իսկ մարդը, օգտվելով ընդմիջումից, մոտեցավ խաղացողներին:

— Տղաներ, — հարցրեց նա, — այստեղ ինչ-որ տեղում գտնվո՞ւմ է ինչ-որ արհեստանոց...

— Ահա, — մատով ցույց տվեց տղաներից մեկը դեպի այն դարպասը, որով հենց նոր ներս էր մտել մարդը:

Նա շուտ եկավ: Դարպասի կողքին նա տեսավ մի դուռ, իսկ դռան մոտ՝ պատին ամրացված քառակուսի ցուցատախտակ: Ապակիով ծածկված, սև ֆոնի վրա, ոսկե տառերով, նա դեռ հեռվից նկատեց «Կենցաղային սկավառակներ» անունը:

Մոտենալով տախտակին և կանգնելով դրա առջև, նա կարդաց նաև մանր տառերով գրված լրիվ տեքստը. «Տեղական արդյունաբերության միևնույնության լայն սպառման առարկաների միավորման կենցաղային սկավառակների գործարանային տիպի արհեստանոց»:

Ցուցատախտակի չորս կողմում պատը ծակծկված էր բազմաթիվ տեղերով, ինչպես եռանդուն գնդակոծությունից: Գուցե, իսկապես, դիմացի կորպուսից փորձնական հրաձգություն էին կատարել մարտական գնդակներով, նշանախեց ունենալով այդ ցուցատախտակը: Բայց այդ ի՞նչ անշնորհք նշանառու էր եղել հրաձիգը, որ բոլոր գնդակները վրիպել էին:

Մարդը նայում էր այդ անցքերին և աշխատում էր պարզել դրանց ծագումը: Բայց որքան էլ երկար էր նայում, չէր կարողանում գլխի ընկնել, որ դրանք գործարանային տիպի արհեստանոցի նախկին ցուցատախտակների մեխերի տեղերն էին: Արհեստանոցի յուրաքանչյուր նոր վարիչ, ստանձնելով իր պաշտոնը, առաջին հերթին մտահոգվել էր ցուցատախտակով:

Բայց չի կարելի մեղադրել այդ վարիչներին: Նրանք հոգացել էին տախտակի ոչ թե ձևի, այլ բովանդակության մասին: Իր գոյության առաջին օրվանից մինչև այդ օրը արհեստանոցը դեռ չէր կարողացել գտնել իր համար լիովին համապատասխան անուն: Եվ իրոք, ի՞նչ էր նշանակում «կենցաղային սկավառակներ»...

Բայց դա գուցե լավագույն անունն էր բոլոր երբևէ գոյություն ունեցածներից: Ինչէ՛ր ասես, որ գրված չէին եղել նեղ ու երկար, լայն ու կարճ, երկար ու լայն, կարճ ու նեղ նախորդ ցուցատախտակների վրա... Բավական է հիշատակել դրանցից մեկը, որպեսզի «Կենցաղային սկավառակները» սիմֆոնիա թվա մեր ականջին. «Արտել կլոր տափակ»,— ահա թե ինչ էր գրված եղել «Կենցաղային սկավառակներ»-ից առաջ...

Արհեստանոցի վերջին վարիչ Վարդ-Թորոսյանն իրամենաառաջին գործն էր համարել սեփական ձեռքերով պոկել այդ ծիծաղաշարժ անունը կրող ցուցատախտակը և դրա փոխարեն ամրացնել դարձյալ մի քիչ անհասկանալի, բայց միանգամայն տանելի «Կենցաղային սկավառակներ»-ը: Նույն այդ Վարդ-Թորոսյանը, վախճանալով, որ երեխաներ ֆուտբոլի գնդակի մի պատահական հարվածով կարող են ջարդել ցուցատախտակի ապակին, խնդրել էր նրանց՝ փոխել ֆուտբոլային դաշտի ուղղությունը: Ի պատիվ բակի երեխաների՝ պետք է ասել, որ նրանք իսկույն կատարել էին նրա խնդիրը, չնայած որ այդպիսով զգալիորեն կրճատվել էր ֆուտբոլային դաշտի նորմալ երկարությունը: Այժմ նրանք, փոխանակ ցուցատախտակի, ջարդում էին միայն բնակարանների լուսամուտների ապակիները: Համարյա օր չէր պատահում, որ աղմուկով դուրս չթռչեր որևէ տատիկ և առաջին կատեգորիայի դատավորի ահեղ ձայնով վերջ չդներ խաղին: Բայց, դարձյալ ի պատիվ բակի երեխաների, պետք է ասել, որ ամեն անգամ նրանք հատուցում էին տատիկների կրած վնասները և շարունակում խաղը: Համարյա անխուսափելի համարելով նման դեպքերը, նրանք ամեն անգամ խաղն սկսելուց առաջ իրար մեջ հավաքում էին ջարդվելու դատապարտված ապակու գումարը և ջարդվելուց համարյա անմիջապես հետո հրավիրում էին շրջիկ ապակի գցողների, որոնք բոլորին նրանք ճանաչում էին անուն-ազգանունով:

Զգտնելով ցուցատախտակի շուրջը եղած անցքերի ծագման բացատրությունը, մարդը նորից ուշադրություն դարձրեց դրա բովանդակությանը:

— Գրում են՝ ինչ որ խելքներին փչում է,— բարկացած փնթփնթաց նա:— Ի՞նչ է նշանակում «Կենցաղային սկավառակներ»...

Ըստ երևույթին նա հանգիստ բնավորության մարդ չէր: Արագ շարժումով մղվելով առաջ, նա մտավ արհեստանոց, ընդ որում, ուներ այնպիսի տեսք, կարծես գնում էր կռվելու արհեստանոցի վարիչի հետ՝ արհեստանոցի այդ անհեթեթ անվան պատճառով:

## 2

Իսկապես, ի՞նչ էր նշանակում «Կենցաղային սկավառակներ»: Ի՞նչ էր արտադրում գործարանային տիպի այդ արհեստանոցը:

Նախորդ ցուցատախտակների մեխերի հետքերն արհեստանոցի պատի վրա՝ ապացուցում էին ոչ թե նախորդ վարիչների լեզվագիտական անկարողությունը, այլ այն, որ իրոք, դժվար էր անվանել այն առարկաները, որոնք արտադրում էր արհեստանոցը:

Բանն այն էր, որ մարդուն որոշակի դեր ու նշանակություն ունեցող առարկաներից բացի, հարկավոր են լինում նաև այնպիսի իրեր, որոնք չունեն այդ որոշակի դերն նշանակությունը, այլ, այսպես ասած՝ անորոշ առարկաներ են, կարող են պետք գալ և մի բանի համար, և մի ուրիշ բանի:

Օրինակի համար, տնտեսուհին մուրաբա է եփել և լցրել է ապակյա լայնաբերան ամանի մեջ: Իսկ ամանը պատկանում է բավական անփութորեն արտադրված այն ամանների տեսակին, որոնք չունեն ոչ կափարիչ, ոչ էլ ետ ծավված պռունկներ՝ վրան թուղթ կապելու համար: Ի՞նչ է տնտեսուհուն, եթե ոչ ամանը ծածկել առաջին իսկ հանդիպած ֆաներայի կտորով կամ ապագա խոստացող հիսուն տարեկան մի բանաստեղծի առայժմ խիստ անհաջող ժողովածուով:

Իսկ մի՞թե ավելի լավ չէր լինի, եթե նա ձեռքի տակ ունենար որևէ մաքուր սկավառակ, որը կարելի լիներ դնել ամանի վրա:

Բայց ահա մուրաբան կերված է, և ամանը մաքուր լվացված, դրված է պահարանում բերանքսիվայր: Իսկ ֆաներան, որը ժամանակավորապես ստացել էր դեր ու նշանակություն, այժմ նորից ընկած է անգործ ու անանուն:

Լուսամուտների գոգերում դրված են թաղարներով ծաղիկներ: Շատ տնտեսուհիներ թաղարները դնում են ափսեների մեջ: Իսկ դա մեր տնտեսուհուն դուր չի գալիս.— տգեղ է և ընդհանրապես զգացվում է, որ ափսեն իր տարերքի մեջ չէ: Նա հիշում է սկավառակը: Միայն ափսոս, որ դա մի հատ է, իսկ թաղարները՝ մի քանի: Եվ հետո, տձև ֆաներան նույնպես տգեղ է, իսկ ժամանակի ընթացքում ծմմովում է, շերտահան լինում, փչանում: Ավելի լավ չէր՝ լինի ունենալ մի քանի մետաղյա փայլուն սկավառակներ...

Ահա թե ինչ է արտադրում գործարանային տիպի այդ արհեստանոցը «Կենցաղային սկավառակներ» անվան տակ:

Մտնելով երկաթեղենի խանութ, որտեղ վաճառվում են վաննաներ, դույլեր, դռների և լուսամուտների բռնակներ, մեխ և նման բաներ, գնորդը հանկարծ ուշադրություն էր դարձնում դարակներից մեկի վրա դարսված մեծ ու փոքր սկավառակների վրա:

— Իսկ դրանք ինչի համար են,— հետաքրքրված հարցնում էր նա:

— Ամեն ինչի համար,— վճռական պատասխանում էր վաճառորդը և աշխուժորեն պատրաստվում էր շատ երկար թվարկել,— մուրաբայի աման ծածկելու, ծաղկի թաղարի տակ դնելու...

Այստեղ կտրուկ կանգ էր առնում թվարկումը, բայց վաճառորդն առանց շփոթվելու, նույն առույգ տոնով վրա էր բերում փրկարար բառը.

— Եվ այլն:

Առանց գիտակցելու, նա դրանով տալիս էր սկավառակների ամենաճիշտ բնորոշումը.— և այլն: Մի՞թե նա կարող էր մտաբերել կամ կանխատեսել կենցաղում հանդիպող այն բոլոր դեպքերը, երբ մարդուն հարկավոր են սկավառակներ: Իսկ այդ դեպքերը բավական շատ են: Դրան ապացույց այն, որ գործարանային տիպի այդ արհեստանոցի արտադրանքը, թեև դանդաղ, բայց կանոնավոր վաճառվում է, այն էլ՝ բավական թանկ գներով, հատուցում է արհեստանոցի ծախսերը և դեռ որոշ օգուտ է բերում Լայն սպառման առարկաների արտադրության միավորմանը, որը Վարդ-Թորոսյանն անվանում է պարզապես Միավորում:

### 3

Սանդուղքի յոթ-ութե աստիճանները մարդուն իջեցրին կիսանկուղային սենյակի երկփեղկանի մի դռան մոտ: Դռան ետևում կարծես թե բնակարան լիներ: Ուղղակի անհրաժեշտություն էին զգում մտնելուց առաջ դուռը թակել:

— Այդ ի՞նչ նորածնություն է՝ արհեստանոցի դռները երկփեղկանի անել,— իր անբավականությունն արտահայտեց մարդը և մտավ ներս: Սենյակը միջակ մեծության էր: Լուսամուտները, սովորականից մի քիչ փոքր, նայում էին դեպի նրբանցքը: Գրասեղաններից երկուսի ետևում նստած էին արհեստանոցի գրասենյակի աշխատակիցները, իսկ մյուս երկու սեղանների ետևում ոչ ոք չկար:

Սենյակի ծախս պատի վրա բացվում էին երկու դուռ: Դրանցից մեկը տանում էր դեպի Վարդ-Թորոսյանի կաբինետը. այդ երկուսն էր դռան կաշվեպատ լինելուց: Մյուս դուռը պատկանում էր բուն արհեստանոցին՝ այն մի քիչ յուղոտված էր:

Երբ մարդը մտավ գրասենյակ, այնտեղ նստած երիտասարդ կինն իսկույն փակեց գրասեղանի դարակը, որտեղ դրված էր մի բաց գիրք: Մյուս սեղանի ետևում, գլուխը թղթերի վրա կախած, աշխատում էր հասակավոր մի տղամարդ:

— Դո՛ւք եք ընկեր Թորոսյանը,— դիմեց այցելուն նրան:

— Ես էլ եմ Թորոսյան,— պատասխանեց գրասենյակի աշխատակիցը՝ դեպի իրեն քաշելով հաշվիչը և սկսելով չիսկացնել:

— Այսինքն՝ ինչպե՛ս:

— Մենք Թորոսյաններ շատ ունենք, դուք որի՞ն եք ուզում,— հարցրեց աշխատակիցը՝ առանց գլուխը բարձրացնելու:

— Վարիչին:

— Վարիչը Վարդ-Թորոսյանն է, իսկ ես առանց Վարդի եմ,— բացատրեց աշխատակիցը: Ըստ երևույթին առաջին անգամը չէր, որ նրան շփոթում էին վարիչի հետ:

Մարդը մոտեցավ երիտասարդ կնոջը:

— Իսկույն,— ասաց կինը՝ առանց սպասելու նրա հարցին, և մտավ վարիչի կաբինետը: Դուրս գալով այնտեղից համարյա անմիջապես, նա ասաց.

— Մտեք:

Մարդը մտավ կաբինետ:

### 4

Որքան էլ որ սկավառակները հարկավոր են մարդուն, բայց և այնպես դրանք ոչ էքսկավատոր են, ոչ դաշնամուր և ոչ էլ նույնիսկ գուլպա: Արհեստանոցի վարիչ Վարդ-Թորոսյանի դեմքի վրա միշտ կարելի է տեսնել այդ բանի գիտակցության բավական նկատելի տխուր արտահայտությունը:

Բավական չէ գիտակցել, որ քո արտադրանքն իր տեղն ունի կյանքում: Հարկավոր է, որ այդ տեղը լինի կարևոր, առաջնահերթ: Ո՞ր դիրեկտորի կամ վարիչի համար հաճելի չէ արտադրել ավելի անհրաժեշտ իրեր, քան արտադրում է նա տվյալ մոմենտին: Կան ազատ դիրեկտորներ, որոնք, չնայած որ առանց այն էլ արտադրում են այնպիսի իրեր, որպիսիք չի էլ երազել Վարդ-Թորոսյանը, այնուամենայնիվ ձգտում են էլ ավելի լայնացնել ասորտիմենտը, ընդգրկել ավելի անհրաժեշտ «նոմենկլատուրա»:

Իսկ ի՞նչ անի «Կենցաղային սկավառակների» արհեստանոցի վարիչը, որ միայն «և այլն» է արտադրում...

Միավորման դիրեկտորների և վարիչների խորհրդակցություններում, չնայած իր դեմքի անկախ արտահայտությանը, Վարդ-Թորոսյանն ամենափոքր մարդն էր զգում իրեն: Մանրիկ, նիհարիկ, ցածրահասակ վարիչներն ավելի մեծ էին, իսկ նա՝ հաղթանդամ, բարձրահասակ, երեսուներկու տարեկան Վարդ-Թորոսյանը՝ ամենափոքրն էր...

Ոչ, նեղսիրտ վիրավորանք չէր դա, այլ սեփական դերի փոքրության գիտակցում: Ո՛ւմն է հաճելի՝ լինել փոքրիկ, ասացեք ինդրեմ...

Շատերը նրան այնտեղ կատակով անվանում էին «կլոր-տափակ դիրեկտոր», և ամեն անգամ նա, միակ մռայլվածք բոլոր զվարթների մեջ, ստիպված էր լինում հիշեցնել, որ առաջին՝ ինքը դիրեկտոր չէ, այլ ընդամենը՝ վարիչ և երկրորդ՝ արհեստանոցը վաղուց արդեն կոչվում է ոչ թե «Կլոր-տափակ», այլ «Կենցաղային սկավառակների գործարանային տիպի արհեստանոց»:

Մի ուրիշը Վարդ-Թորոսյանի փոխարեն բոլորովին կկորչեր զանազան առավելություններով օժտված արտելների և արհեստանոցների այդ ղեկավարների շրջանում: Բայց նա իրեն պահում էր արժանավայել, անկախ, որպես բոլոր մյուսներին հավասար՝ եթե ոչ նրանցից գերազանց: Եվ դա ոչ թե իր հաղթ կազմվածքի և հոգու արիության շնորհիվ, այլ այն բանի, որ ամեն անգամ նա խորհրդակցության էր գնում լավագույն ցուցանիշներով: Ով կատարեր-չկատարեր իր պլանները՝ նա կատարում էր անպայման: Ով չպահեր իր խոստումները և չկենսագործեր ստանձնած պարտավորությունները՝ նա պահում էր և կենսագործում: Չկար միավորման ցանցում ավելի լավ աշխատող ձեռնարկություն, քան այն ձեռնարկությունը, որի ղեկավարն էր ընկեր Ավետիք Վարդ-Թորոսյանը:

Շատերն էին նախանձում նրան բարի նախանձով, բայց կային նաև չար նախանձողներ:

Վերջիններս աշխատում էին նսեմացնել նրա նվաճումների նշանակությունը:

— Դե իհարկե կկատարես,— ասում էին նրանք,— ինչո՞ւ չես կատարի: Հումքդ՝ պատրաստ, ձեռքիդ տակ, իսկ արտադրանքդ՝ պարզ, պրիմիտիվ: Ապա, փորձիր արտադրել թելուզ ամենահասարակ խոզանակներ: Է՛լ փայտ, Է՛լ խոզի մազ, Է՛լ սոսինձ, Է՛լ ամուր թել, Է՛լ ներկ, Է՛լ լաք... Ապահովիր քեզ այդ ամենով, իսկ ապահովելուց հետո էլ անընդհատ հետևիր արտադրական պրոցեսին, արտադրանքի որակին, գեղեցկությանը... Իսկ դո՞ւ: Եթե սկավառակը մի փոքր ծուռ եղավ՝ պատուհաս չէ: Կամ, ասենք թե, մի փոքր հաստ կամ լայն: Յուր կտանի: Ի միջի այլոց, Ավետիք, դու Է՛լ ունես տեխնիկական կոնստրուկտիվ բաժին, թե ոչ: Հա՛-հա՛, հի՛-հի՛...

— Մի անգամ բարեհաճիր այցելել մեզ՝ աչքովդ կտեսնես ամեն ինչ,— անդրդվելի հանգստությամբ պատասխանում էր Վարդ-Թորոսյանը:— Հեռվից մեր գործը հեշտ է երևում: Գալով ասորտիմենտին...

Այս ասելով նա պառկեց և տալիս, բայց ոչ թե նրա համար, որ չգիտեր ինչ ասեր, այլ որպեսզի ավելի մեծ տպավորություն թողներ իր ասելիքը.

— Գալով ասորտիմենտին, մենք արդեն յուրացրել ենք տաք առարկաների՝ արդուկների, թեյամանների, կաթսաների և այլնի համար տոտիկավոր տակդիրների արտադրությունը: Թող հայտնի լինի քեզ, որ բացի դրանից, մենք շուտով սկսելու ենք էլեկտրական պլիտաների ջեռուցման սկավառակների արտադրությունը՝ որպես պահեստային մասեր՝ ժանգոտված կամ ինչ-ինչ պատճառներով փչացածները փոխարինելու համար...

Այո, Վարդ-Թորոսյանի որոնող միտքը շարունակել էր փնտրում «և այլնի» վիճակից:

Բնակարաններում թե հիմնարկներում, փողոցներում թե զբոսավայրերում, նա ուշադրություն էր դարձնում, թե ի՞նչ կա կլոր ու տափակ, որի արտադրությունը կարելի լիներ սկսել իրեն վստահված արհեստանոցում: Այդ որոնումները երբեմն նրան բերում էին գովելի արդյունքի, երբեմն էլ, ընդհակառակը, դատապարտելի:

Այսպես, մի անգամ նկատելով, որ երեխաներն ասֆալտի վրա քշում են սեփական ձեռքով շինված սայլակներ ու «ծիեր», որոնց անիվները նրանք հանել են մահճակալների ոտքերից, նա միտք հղացավ քաղաքի երեխաներին հայթայթել անհրաժեշտ քանակությամբ ստանդարտ անիվներ: Չանցած մի քանի օր, միլիցիաներներն սկսեցին մեծ զարմանքով նկատել, որ քաղաքում զարգանում է տրանսպորտի մի նոր տեսակ.— արկո, որի մեջ հայարտ բազմել են մի կամ մի քանի երեխաներ, և «ռիկշի», որը քաշում է այդ արկոը՝ ասֆալտի վրա հնչեցնելով փայլուն փոքրիկ անիվները՝ սարքված հաստ սկավառակներից:

Մի դեպքից հետո, երբ այդպիսի մի արկո քիչ էր մնացել, որ ընկներ ավտոմեքենայի տակ, կատարվեց հետաքննություն և հայտաբերվեց դրա իսկական մեղավորը՝ Վարդ-Թորոսյանը, որը քիչ մնաց դուրս թռչել իր պաշտոնից:

Հարկ եղավ իսկույն դադարեցնել «կենցաղային անիվների» արտադրությունը, որից հետո, սակայն, դեռ բավական ժամանակ երեխաները ռմբակոծում էին երկաթեղենի խանութները.

«Քեռի, անիվներ չունե՞ք...»:

Մի ուրիշ անգամ, դարձյալ փողոցում, Վարդ Թորոսյանն ուշադրություն դարձրեց մի այլ բանի վրա, որի վրա մինչ այդ շատերն անշուշտ ուշադրություն էին դարձրել՝ առանց գործնական եզրակացություններ հանելու: Խորհրդային վաղ տարիներին, էլ չասած նախախորհրդային շրջանի մասին, քաղաքներում սովորական բան էր բեռնակրի կերպարանքը: Համետը մեջքին հագած, նա սպասում էր, թե ո՞վ կկանչի նրան բեռ փոխադրելու:

Եվ ահա, անցնում է նա՝ պահարանը շալակած, բեռի ներքո երկտակ կռացած, քրտինքը ճակատից ծորալով: Իսկ եթե պահարան չէր դա, այլ դաշնամուր, ապա վեցից ութ բեռնակիր չորս կողմից և տակից կպել են դրան՝ ինչպես միջուկները մի սև, մեծ բզեզի, և ճիգով փոխելով

ուղքերը, դնելով իրարից հեռու, տազնապալի քստքստացնելով և փնտրելով հենարան, գնում են մանր քայլերով, մերթ անվերջանալիորեն դանդաղ, մերթ վախեցած կերպով արագ, լարումից երակներն ուռած, բեռը վար գցելու ահից աչքերն անշարժացած:

Տարիների հետ խորհրդային քաղաքներում հայտնվեցին և սկսեցին բազմանալ ավտոմեքենաներ, մարդու ֆիզիկական աշխատանքը թեթևացնող կամ ամբողջովին իրենք կատարող մեխանիզմներ: Եվ այժմ արդեն սկսեց աչք ծակել բեռնակրի աշխատանքը՝ որպես անցյալի ոչ միայն տխուր, այլև գայրացուցիչ մնացուկ:

— Զաղաքացի, ինչո՞ւ ավտոյով չեք փոխադրում ձեր կահ-կարասին,— հարցնում էր փողոցում հանդիպած առաջի իսկ պիոները:— Չէ՞ որ կան բեռնատար տաքսի-ավտոներ...

— Ավտո մի թախտի համա՞ր,— շփոթված հարցնում էր բեռնակրի կողքով գնացող քաղաքացին:

— Իսկ մենք անգո՞րծ մսանք,— բեռնան տակից դիմում էր բեռնակիրն ինքը, որը վաղուց արդեն գտնվում էր բոլոր կանոններով կազմակերպված «Բեռնակիր» արտելի մեջ:

Եվ պիոներին մնում էր լռել: Լռել, բայց չհաշտվել ֆիզիկական աշխատանքի այդպիսի վիճակի հետ: Իսկ ելք նա առայժմ չէր գտնում:

Ելքը գտավ Վարդ-Թորոսյանը: Նախ մի լավ կռվելով «Բեռնակիր» արտելի դիրեկտորի հետ և ապա պայմանագիր կնքելով, նա սկսեց արտադրել անիվներ՝ երեխաների համար արտադրածներից զգալիորեն մեծ: Չանցած մի ամիս, «Բեռնակիր» արտելը բեռնակիրների մեջքից իջեցրեց մարդու արժանապատվությունը վիրավորող համետները, դադարեցրեց դրանց արտադրությունը և բեռնակիրներին օժտեց շատ թեթև ընթացք ունեցող ցածրիկ սայլակներով: Բոլոր երիտասարդ բեռնակիրներն ուրախացան, իսկ ծերունիները, միաժամանակ նաև տխրեցին, որ իրենց կյանքն անցկացրել էին ծանր բեռների տակ մեջքները կքած: Այդքան, հասարակ հեշտ բան, բայց նրանք ոչ միայն չէին օգտվել սայլակներից, այլև չէին էլ մտածել այդ մասին: Սակայն մեղավոր չէին նրանք: Միտքը, ինչպես հայտնի է, խարսխվում է կեցության վրա: Անցյալում այդ սայլակները չէին հնարել այն պարզ պատճառով, որ ցեխի ու փոշու մեջ թաղված, ջրափոսերով ծածկված խորդուբորդ փողոցները չէին կարող հղացնել այդպիսի միտք, և անիվները չէին կարող սահել այդպիսի փողոցներով՝ մարդու ուժով քաշված...

Այդ միտքը հղացրեց և իրագործելու հնարավորությունն տվեց միայն ասֆալտը:

Այո, Վարդ-Թորոսյանի որոնող միտքը շարունակ փնտրում էր նորանոր ասորտիմենտ, որպեսզի արհեստանոցը բաց թողներ ոչ միայն անորոշ, այլև որոշակի դեր ու նշանակություն ունեցող սկավառակներ: Մանավանդ որ, ինչպես ինքն էր ասում, արհեստանոցը բնակչությանն արդեն «հագեցրել» էր սկավառակներով այն աստիճան, որ դրանց վաճառքը շուտով կարող էր իջնել միևնույնի:

Սակայն, որքան էլ որ լարված լինեին նրա որոնումները, նա վաղուց արդեն իր ուշադիր դիտողությունների հիման վրա եկել էր այն տխուր եզրակացության, որ կյանքում կյոռ տափակ ձև ունեն միայն երկրորդական առարկաները: Կարևոր առարկաները լինում են կյոռ, բայց ոչ տափակ, կամ, ընդհակառակը, տափակ, բայց ոչ կյոռ: Իսկ ընդհանրապես դրանք ունենում են բազմաթիվ բարդ ձևեր, որտեղ կլորությունն ու տափակությունը մտնում են որպես բաղկացուցիչ տարրեր:

Այդպիսով նրա արհեստանոցին վիճակված էր շարունակ արտադրել երկրորդական առարկաներ: Փոխել իր արտադրանքի ձևը նա չէր կարող, դա պայմանավորված էր արհեստանոցի տեխնիկական հնարավորություններով և մանավանդ այն հումքով, որը նա ստանում էր մեքենայական գործարանի մնացուկներից:

«Ջեռանկար չունեցող գործ է»,— երբեմն ցավով խոստովանում էր արհեստանոցի վարիչն ինքնիրեն: Իսկ Միավորման դիրեկտորներին ու վարիչներին, որոնք հաճախ էին գովում նրա արհեստանոցի լավ կազմակերպված աշխատանքը, նա պատասխանում էր դեմքի մելամաղձոտ արտահայտությամբ և ձեռքի տխուր թափահարումով:

— Դեռ հայտնի չէ այնպիսի մի դեպք, երբ կենցաղային սկավառակներ արտադրելու համար մարդիկ շքանշաններ ստացած լինեն...

Սակայն չպետք է կարծել, թե Վարդ-Թորոսյանը մեծամիտ ու փառամոլ մարդ էր, որը կարծում էր, թե այդ արհեստանոցը նրա տեղը չէր, որ նա կարող էր ավելի մեծ արհեստանոց կամ գործարան ղեկավարել, և որ հիմա արդեն նա արժանի էր շքանշանի, որը նա չէր ստանում անարդարացիորեն:

Ոչ բնավ, այդպիսի մարդ չէր նա: Նա հառաչում էր ոչ թե ներկայի, այլ ապագայի համար, որպիսին չունեիր նրա ղեկավարած արհեստանոցը:

Իր ժամանակին տնտեսագիտական տեխնիկումն ավարտելուց հետո երիտասարդ Վարդ-Թորոսյանն սկսել էր աշխատել նախ որպես խանութի վարիչ, ապա՝ ապրանքագետ, այնուհետև՝ մի խոշոր պահեստի պետ, դրանից հետո պլանային բաժնի վարիչ, գործարանի խոտանիչ, էքսպերտ հանձնաժողովի անդամ և այլն, և այլն: Չորս տարվա ընթացքում նա հոգնել էր տեղից տեղ թռչկոտելուց, իհարկե, հակառակ իր կամքին: Նա նման էր տնտեսական ֆրոնտի թափառաշրջիկ գնչուի: Բայց նրան որպես բարեխիղճ աշխատողի էին փոխադրում միշտ այնտեղ,

որտեղ նախորդ աշխատողը բավական փչացրած էր լինում գործը կամ պարզապես անընդունակ էր լինում առաջ շարժել այն: Իսկ Վարդ-Թորոսյանը տառապում էր: Չորրորդ տարում նույնպես, ինչպես և առաջինում, նա երագում էր վերջնականապես հաստատվել մի գործի վրա, աճեցնել գործը և աճել դրա հետ միասին:

Նրա երագանքի առաջին մասը՝ վերջնականապես մի գործի վրա հաստատվելը, կարծես կատարվել էր: Արդեն երրորդ տարին էր, ինչ նա աշխատում էր «Կենցաղային սկավառակների» արհեստանոցում և, ըստ երևույթին, վտանգ էլ չկար նրան այդտեղից շուտով փոխադրելու: Բայց նրա երագանքի երկրորդ մասը՝ գործն աճեցնելը և գործի հետ միասին աճելը՝ դժբախտաբար մնացել էր անկատար:

Ծիշտ է, գործի մեջ որոշ աճում նկատվում էր, աճում նկատվում էր նաև նրա՝ վարիչի մեջ, բայց երկու աճումներն էլ կարճ դիստանցիայի աճումներ էին, չունեին հեռանկար:

Այս բացատրությունից հետո, իհարկե, Վարդ-Թորոսյանի մելամաղձոտությունը մեզ կներկայանա որպես արդարացի մելամաղձոտություն, և տխրությունը՝ որպես ազնիվ տխրություն:

Վարդ-Թորոսյանն աշխատանքի էր գալիս իր բոլոր աշխատակիցների հետ միասին և գնում նույնպես՝ նրանց հետ միասին: Այսինքն՝ ոչ թե միասին, այլ միաժամանակ: Իսկ միասին, ընդհանրապես, նա աշխատում էր որքան հնարավոր է՝ քիչ լինել:

— Մեծ ձեռնարկության դիրեկտորը,— ասում էր նա հաճախ ինքնիրեն, միայն ինքնիրեն,— պետք է պարզ վարվելակերպ ունենա իր ստորադրյալների հետ: Դա ավելի կբարձրացնի նրա հեղինակությունը, սիրելի կդարձնի նրա անձնավորությունը: Բոլորը կասեն՝ «Տեսեք, այսքան խոշոր դիրեկտոր է և այսքան հասարակ»: Գալով փոքր ձեռնարկության վարիչին, նա դժբախտաբար զրկված է նույն կերպ վարվելու հնարավորությունից: Ձեռնարկության փոքրությունն արդեն, չի տալիս նրան ոչ մի հեղինակություն: Իսկ եթե դրանից բացի նա նաև պարզ պահի իրեն իր աշխատակիցների հետ, ապա այլևս ոչ ոք չի ենթարկվի նրան: Այդ դեպքում մնաս բարով, արհեստանոցի կանոնավոր աշխատանք, պլանների կատարում... Պետք է դիրք պահել, դա տխուր անհրաժեշտություն է...

Դեկավարվելով այդ սկզբունքով, Վարդ-Թորոսյանը գրասենյակ էր մտնում աշխատանքային ժամն սկսվելուց ուղիղ մի րոպե հետո, լուրջ բարևում էր՝ աչքերը հատակին հառած, հետո նայում էր իր թևի ժամացույցին և ապա գրասենյակներին, տեսնելու համար, թե բոլոր աշխատակիցներն են արդյոք իրենց տեղերում: Բաց անելով արհեստանոցի դուռը, նա նույնպես բարևում էր դեպի ներս և հարցնում, թե ամեն ինչ կարգի՞ն է աշխատանքային օրն սկսելու համար: Դրանից հետո նա մտնում էր իր կաբինետը և այլևս դուրս չէր գալիս այնտեղից մինչև օրվա վերջը:

Ի՞նչ էր անում նա այնտեղ, ինչո՞վ էր զբաղվում... Դիրք էր պահում՝ մենք այդ գիտենք: Իսկ ուրի՞շ: Կարելի՞ է արդյոք միայն դիրք պահելուն նվիրել աշխատանքային ամբողջ օրը, որի ընթացքում հանքահատն արտադրում է բազմաթիվ տոննաներով քարածուխ, կոմբայնավարը հնձում է բազմաթիվ հեկտարներով հացահատիկ, իսկական վարիչը կամ դիրեկտորն առաջ է մղում մի ամբողջ տրեստ, կոմբինատ, շինարարություն...

Ե՞րբ էլ քարտուղարուհին մտներ նրա մոտ, նա վարիչին կտեսներ մտազբաղ, թղթերի վրա գլուխը խոնարհած: Ի միջի այլոց, շատ սակավ էր առիթ լինում մտնել կաբինետ: Վարիչն ինքը ևս շատ քիչ էր առիթ ունենում դուրս գալու ընդհանուր բաժին կամ այդտեղով անցնելու արհեստանոց:

Քարտուղարուհուն նա կանչում էր ինչպես սովորաբար կանչում են, զանգի միջոցով: Ընդ որում, զանգի հնչելու հետ միասին առաստաղի մոտ վառվում-հանգչում էր էլեկտրական թոսյլ լամպը:

Կաբինետում, որտեղ վարիչի փոքրիկ սեղանին կից դրված էր երկար ու մեծ մի այլ սեղան, իհարկե, տեղի չէր ունենում և ոչ մի գաղտնի խորհրդակցություն, չէր քննվում արտադրական և ոչ մի գաղտնիք: Դռան կաշվեպատ լինելը նույնպես, որն արված էր Վարդ-Թորոսյանի կարգադրությամբ, հեղինակության և «դիրքի» համար էր:

Երբեմն, երկու կամ երեք օրը մեկ, վարիչն աշխատանքային օրվա որևէ ժամին, գլխարկը դրած, դուրս էր գալիս իր անարև, ստվերոտ, կիսանկուղային կաբինետից, որի լուսամուտով կարելի էր տեսնել նրբանցքով անցնող մարդկանց կոշիկները միայն, համենայն դեպս՝ ծնկներից ոչ բարձր, և ասում էր.

— Մարգարյան, ես գնում եմ Միավորում:

Եվ կամ.

— Եթե հարցնողներ կլինեն՝ թող զանգահարեն Միավորում:

Արհեստանոցի գրասենյակը հեռախոս չունեցրելով, որոնք համարյա երբեք չէին լինում, կարող էին զանգահարել՝ որտեղից որ ուզե՞նային:

## 5

Մտնելով կաբինետ, այցելուն Վարդ-Թորոսյանին գտավ սաստիկ զբաղված: Վարիչն ինչ-որ թուղթ էր կարդում՝ ամբողջովին կլանված դրանով: Առանց գլուխը բարձրացնելու նա ձեռքով ցույց տվեց աթոռը, այսինքն՝ նստեցեք: Եվ համարյա իսկույն գլուխը վեր բարձրացնելով, նայեց հոգևած ու հուսահատ տեսքով, այսինքն՝ «Էլի խանգարեցին, չեն թողնում աշխատել», — և ասաց հառաչով.

— Ես ձեզ լսում եմ:

— Ինձ ուղարկել է ձեզ մոտ ձեր ծանոթներից մեկը:

— Ի՞նչ գործով:

— Աշխատելու հաստոցի վրա:

Վարիչն անմիջապես զոջաց, որ գլուխը շուտ էր բարձրացրել թղթի վրայից: Քանի որ այցելուն աշխատելու է իրենց մոտ, հարկավոր էր հենց սկզբից «դիրք պահել» նրա նկատմամբ, որպեսզի հեղինակությունը հաստատուն պահեր նրա աչքում:

— Իսկույն,— ասաց նա և նորից գլուխը խոնարհեց թղթի վրա: Մեքենայորեն կարդալով թուղթը, որի բովանդակությունն ահա երեք ամիս էր, ինչ անգիր ծանոթ էր նրան, իսկ միաժամանակ ակամայից մտքում մի քանի անգամ կրկնելով քիչ առաջ բակի երեխաներից լսած երգը՝ «սպիտակ գույնի մեր կատուն այսօր մտավ ներկատուն», նա բարձրացրեց գլուխը և նորից ասաց:

— Ես ձեզ լսում եմ:

— Իսկ ես արդեն ասել եմ,— կտրուկ հայտնեց այցելուն:

Վարիչը զուսպ վորովմունքով նայեց նրան: Նրա առջև նստած էր մոտ երեսուն տարեկան մի մարդ՝ արևից վառված կռվարար դեմքով: Նրա աչքերը, մի քիչ դուրս պրծած, կենդանի և ակտիվ արտահայտությամբ, կարծես պատրաստվում էին հարձակվել դիմացի մարդու վրա: Դեպի դիմացի մարդն էին գրոհում նաև նրա ճակատի վրա կախված մազափունջը, հանդուգն խոսքեր ասելու պատրաստ մի քիչ ուռած շրթունքները, ուժեղ կզակը:

«Չպետք է ընդունել,— որոշեց մտքում Վարդ-Թորոսյանը,— կյանուզնիկի դեմք է: Այնուամենայնիվ մեզ մի բանվոր է հարկավոր, իսկ ոչ ոք չի ուզում մեզ մոտ աշխատել...»:

Այցելուն դեպի նա երկարեց փոքրիկ գրությունը: Վարիչը նայեց դրան և ասաց ավելի հաշտ ձայնով:

— Այո, ընկեր Սարոյան, մենք ձեզ կընդունենք: Պայմանները ձեզ ծանոթ են:

— Մոտավորապես:

— Իսկ ես ծանոթացնեմ ճշտապես: Ինձ վստահված այս արհեստանոցը մեր Միավորման ամենաօրինակելի արհեստանոցն է: Ներեցեք, որ քննադատության և ինքնաքննադատության փոխարեն ես գովեստով եմ սկսում, բայց փաստն է այդպես, ես ոչինչ չեմ կարող անել...

Եվ վարիչը, հառաչելով ու ձեռքերը տարածելով, որ պանծալի փաստերը նրան հնարավորություն չեն տալիս վատ բան ասել արհեստանոցի մասին, շարունակեց:

— Մեզ անձանոթ է «թերակատարում» բառը: Մեր բառարանում չկա նաև «կատարում» բառը:

Մենք գե-րա-կա-տա-րում ենք: Չի պատահել մի դեպք, որ մենք պատվով դուրս չգանք մեր ստանձնած պարտավորության տակից: Եռամսյակ-եռամսյակի ետևից, ժամացույցի մեխանիզմի ճշտությամբ, մենք բարձրացնում ենք աշխատանքի արտադրողականությունը տասը տոկոսով, էլի տասը տոկոսով, միշտ տասը տոկոսով... Մեր արհեստանոցում նորարարական աշխատանքի շարժման մեջ ներգրավված է բանվորների ութսուներեք ամբողջ և մեկ երրորդ տոկոսը, այսինքն՝ հինգ մարդ: Իսկ վեցերորդը նույնիսկ բազմահաստոցային է:

Եվ նա, ձեռքը երկարելով դեպի կաթիլների կողքային պատը՝ լուսամուտի դիմաց, ցույց տվեց մի բազմահաստոցային և հինգ հասարակ առաջավորների լուսանկարները:

— Հույս ունենք, ընկեր Սարոյան, որ դուք ևս կգերակատարեք ձեր նորմաները սահմանված չափով՝ ոչ պակաս և ոչ էլ ավել: Մենք մեծ ռեկորդների ետևից չենք ընկնում, դա ոչ ոքի հարկավոր չէ, իսկ արհեստանոցի արտադրողականությունը, ինչպես ասացի, բարձրացնում ենք անընդհատ: Հույս ունենք, որ դուք ևս կօժանդակեք բարձրացնելու արհեստանոցի պատիվը մի նոր աստիճանի վրա: Գալով աշխատավարձին...

Վարիչը հառաչեց, ապա շարունակեց:

— Աշխատավարձը ցածր է, որովհետև մեր արտադրանքը ևս, ճիշտ խոստովանած, մի բան չէ:

Չնայած դրան, ինքնարժեքը շատ բարձր է: Իջեցնել չենք կարող, կմատնվենք կրափի: Բացի դրանից, մենք բնակչությանն արդեն հագեցրել ենք կենցաղային սկավառակներով...

Վարդ-Թորոսյանը պառուգա տվեց, նորից նայեց առաջին իսկ վայրկյանից նրան դուր չեկած այցելուի վտանգավոր դեմքին և հարցրեց հոգատարությամբ:

— Այնպես որ, գուցե դուք մի ուրի՞շ տեղ ընտրեք՝ ձեր ուժերը ներդնելու համար: Ձեր կատեգորիայով դուք կարող էիք...

— Ինձ համար ձեզ մոտ ևս լավ կլինի,— կարճ կապեց Գարեգին Սարոյանը:

— Ինդրեմ, ինդրեմ,— ժպտաց վարիչը:— Ես միայն ուզեցի նախագուշացնել ձեզ, որպեսզի հետագայում չնեղանաք մեզանից...

Նորից անցնելով գրասենյակի ետևը, Վարդ-Թորոսյանը սեղմեց գրասենյակի անկյունում ամրացված կոճակը: Ներս մտավ քարտուղարուհին:

— Մարգարյան, ընկերոջը ձևակերպեցեք աշխատելու մեզ մոտ որպես բանվոր: Փորձաշրջան հարկավոր չէ, ես երաշխավորում եմ: Ուղղակի ձևակերպեցեք մշտական աշխատանքի:

Մակագրելով Գարեգինից վերցրած գրությունը, նա հանձնեց Աստղիկ Մարգարյանին:

«Կլյաուզնիկի» դեմքով, բայց բոլորովին էլ ոչ կլյաուզնիկ Գարեգին Սարոյանը մտավ «Կենցաղային սկավառակների գործարանային տիպի արհեստանոցի» խաղաղ ու համահավասար ընթացող կյանքի մեջ...

Ինչպե՞ս պատահեց այդ:

Լինելով կադրային բանվոր, նա համարյա տասը տարի աշխատել էր Երևանի մեխանիկական մեծ գործարաններում: Նրան աճեցրել էին բանվորական մեծ կոլեկտիվները: Սարոյանին ճանաչում էին շատերը, գնահատում, իսկ այն հարցը, թե որտեղ պետք է աշխատի նա, հաճախ վճռում էին վերադաս ինստանցիաներում:

Հասարակական աշխատանքի մեջ Գարեգին Սարոյանը ոչ միայն ակտիվ, այլև կռվարար քաղաքացի էր: Իր ամբողջ կյանքում նա ոչ միայն աշխատել էր, այլև պայքարել թերութունների դեմ: Պայքարել էր ազնվորեն, ճիշտ, բայց աղմկոտ: Նրան հարգում էին, բայց և վախենում էին նրանից՝ այդ բառի ոչ վատ իմաստով:

Նա չէր սիրում տեղից տեղ ցատկոտել: Նա ուրախ կլիներ, եթե ամբողջ կյանքում աշխատեր ու պայքարեր միևնույն գործարանում: Բայց դա նրան չէր հաջողվում: Որոշ ժամանակ անց, շնորհիվ գործարանի թերութունների դեմ նրա և ամբողջ կոլեկտիվի մղած պայքարին, այդ թերութունները վերացվում էին, և Գարեգին Սարոյանի համար ձանձրալի էր դառնում այդտեղ աշխատելը: Դեմը պայքարելու բան չկար: Եվ նա խնդրում էր տեղափոխել իրեն մի ուրիշ գործարան: Նրա խնդիրը միշտ հարգում էին, որովհետև նա միշտ բերում էր խելացի պատճառաբանություններ. չէ՞ որ նա ցանկանում էր օժանդակել թերութունները վերացնելուն:

Գուցե կարելի էր Գարեգին Սարոյանին մեղադրել այն բանում միայն, որ կոլեկտիվի հետ միասին վերացնելով տվյալ գործարանի կոպիտ, ակնհայտ, աչքի զարկող թերութունները, նա համարում էր, որ այնտեղ այլևս չկան թերութուններ, չէր տեսնում ավելի «նուրբ», թաքուն, բարդ թերութունները: Նա «առաջնահերթ» թերութունների դեմ մարտնչող մարտիկ էր:

Եվ ահա, տեսնելով, որ Երևանի գործարաններում քչացել են այդպիսի թերութունները, նա ունեցավ երկու այսպիսի զգացում. մի կողմից նա ուրախ էր, որ արտադրությունն օր-օրի վրա դառնում էր ավելի կազմակերպված, կարգի զգված, բայց մյուս կողմից նա ձանձրանում էր թերութունների բացակայությունից:

Փնտրելով թերութուններ, նա սկսեց ուշադրություն դարձնել փոքրիկ արհեստանոցների վրա:

Հենց այդ ժամանակ էլ հարմար առիթ ներկայացավ. մի ծանոթ մարդ նրան խորհուրդ տվեց գործի մտնել Վարդ-Թորոսյանի արհեստանոցում, և տվեց նրան միջնորդման այդ գրությունը:

## 6

Վարիչի կաբինետից դուրս գալով ընդհանուր բաժին, Գարեգին Սարոյանը մտածում էր գրասենյակի սեղանների և արհեստանոցի բանվորների տարօրինակ հարաբերակցության մասին.— հինգ և յոթ...

Այո... Գրասենյակային հինգ աշխատակիցներ ղեկավարում, հաշվում, գրանցում, արձանագրում և պլանավորում էին ընդամենը յոթ բանվորների աշխատանքը...

Դա հին պատմություն էր և դրանում Վարդ-Թորոսյանը մեղավոր չէր: Երբ նա ստանձնեց իր պաշտոնը, նրան ևս զարմացրեց գրասենյակների առատությունը և հաստոցների սակավությունը: Բայց նրան բացատրեցին, որ դա ժամանակավոր երևույթ էր, որ դեռ արհեստանոցի հիմնադրման օրից ծրագրված էր ունենալ ավելի շատ հաստոցներ, արտադրել ավելի բազմազան ասորտիմենտ: Գրասենյակի տվյալ կազմը հանդիսանում էր ինչ-որ պատճառներով առայժմ չստեղծված ահա այդ մեծ արհեստանոցի գրասենյակի մի մասը: Նոր հաստոցներ չստանալու, հարմար չենք չունենալու և մի շարք այլ պատճառներով արհեստանոցի ենթադրյալ մասշտաբը կրճատվել էր տասն անգամ, իսկ գրասենյակը հազիվ հնարավոր էր եղել կրճատել համարյա երկու անգամ: Ինքները դատեցեք, կարելի՞ է արդյոք կրճատել ինը մարդուն տասն անգամ: Դա հո կկազմի մի մարդուց էլ պակաս...

«Կենցաղային սկավառակների գործարանային տիպի արհեստանոցի» գրասենյակի ամբողջ շտաբը, բացի վարիչի պաշտոնից, բաղկացած էր կես դրույքներից: Արդյոք սա լավագույն ապացույցը չէ՞ր միջոցների խնայողության համար ձեռք առնված միջոցառման:

Արհեստակեսը, որի ազգանունը նույնպես Թորոսյան էր, բայց առանց Վարդի, իրենից ներկայացնում էր կես դրույք հաշվապահ և կես դրույք հաշվետար: Նրա հաշվապահական մյուս կեսը գտնվում էր Միավորման ինչ-որ արտելում, իսկ հաշվետարական մյուս կեսը՝ հենց Միավորման գրասենյակում: Աստղիկ Սարգսյանն իր մի գեղեցիկ կեսով ներկայանում էր որպես քարտուղարուհի, իսկ մյուս գեղեցիկ կեսով՝ հավաքարարուհի, թեև բանվորները երբեք թույլ չէին տալիս նրան՝ ձեռք վերցնել ավելը, և իրենք էին հերթով մաքրում արհեստանոցն ու գրասենյակը: Գրասենյակի երրորդ աշխատակից Սիրական Համբարձումյանը բաղկացած էր մինչև իսկ երեք մասերից. նա մեկ երրորդով էքսպեդիտոր-ծախսարար էր, մեկ երրորդով՝ գանձապահ-ինկասսատոր, մեկ երրորդով՝ պահեստապետ-ապրանքագետ: Արհեստանոցի փոքրիկ ռոճկացուցակում նրա տիտղոսների թվարկությունը բռնում էր ամենամեծ տեղը:

Բացի այդ աշխատակիցներից, գրասենյակն ուներ նաև մեքենագրուհի: Ճիշտ է, նա իրենից ներկայացնում էր մի ամբողջ, միաձուլյ դրույք, բայց արհեստանոցին պատկանում էր միայն կիսով չափ: Օրվա մյուս կեսում նա աշխատում էր Միավորման մի այլ արհեստանոցում: Ընդ որում, յուրաքանչյուր արհեստանոցում նա փոխնիփոխ լինում էր մեկ՝ օրվա առաջին կեսում, մեկ՝ երկրորդ: Նրա անունն էլեռնորա էր, ազգանունը՝ Նորադուլգեցյան: Եվ որովհետև լուրջ գործերով զբաղված մարդու համար դժվար էր այդպիսի անուն-ազգանուն հիշելը, դրա համար էլ Վարդ-Թորոսյանը չէր հիշում: Երբ մեքենագրուհին հարկավոր էր լինում նրան, նա բաց էր անում իր կաբինետի կաշվեպատ դուռը, նայում էր դուրս, և եթե չէր տեսնում նրան այնտեղ, ապա հարցնում էր.

— Մարգարյան, այսօր մեր մեքենագրուհին արդեն գնացել է, թե դեռ չի եկել: Եթե Նորադուլգեցյանը դեռ գալու պիտի լիներ, բայց վարիչի դուռը երկրորդ անգամ բացվելիս դարձյալ եկած չէր լինում, Վարդ-Թորոսյանը նորից էր հարցնում նրա մասին այս անգամ՝ բարկացած.

— Ի՞նչ եղավ մեր կես-դրույքը...

Բանվորները մի անգամ լսել էին այդ բառը, որը նրանց շատ էր դուր եկել: Նրանք իրար մեջ էլեռնորային այդպես էլ անվանում էին՝ կես-դրույք:

Ի միջի այլոց, մեքենագրուհին շատ հազվադեպ էր պետք գալիս վարիչին, որովհետև մեքենագրելու գործերը ծայրահեղորեն քիչ էին: Եվ եթե, այնուամենայնիվ, Վարդ-Թորոսյանն էլեռնորա Նորադուլգեցյանի ճիշտ ժամանակին գործի գալով հետաքրքրվում էր բավական հաճախ, ապա նա այդ անում էր արհեստանոցի պատվի և ինքնասիրության համար: Մենք մյուս արհեստանոցից ոչ մի բանով պակաս չենք, ուստի և բարի եղիր քո աշխատանքային օրը հավասար կիսել մեր երկուսի միջև...

Էլեռնորա Նորադուլգեցյանն ամուսնուց բաժանված երիտասարդ կին էր, նույնպես բավական գեղեցիկ: Տգեղ էր նրա միայն բերանը, բայց դա էլ՝ երբ նա լուռ էր: Իսկ երբ խոսում էր՝ բերանը նույնպես դառնում էր գեղեցիկ: Ըստ երևույթին լռությունը նրա բերանի համար անբնական վիճակ էր, նրա բերանը գոյություն ուներ խոսելու համար: Դժվար էր ասել՝ դա նրա բնածին հատկությունն էր, թե՞ անընդհատ չկալալը նա սովորել էր գրամեքենայից, և այժմ, գործի սակավության հետևանքով, բերանը փոխարինում էր գրամեքենային:

Այն օրերին, երբ էլեռնորան «Կենցաղային սկավառակների» արհեստանոցին պատկանում էր իր ետկեսօրյա կեսով, արհեստանոցի գրասենյակի խաղաղ միջավայրը լցվում էր աշխույժ աղմուկով, որն այլևս չէր լռում մինչև աշխատանքային օրվա վերջը:

Մտնելով սենյակ, նա բարևում էր աշխատակիցներին և շտապ դիմում էր քարտուղարուհուն.

— Աստղիկ, ընկեր Վարդ-Թորոսյանը հո չի՞ հարցրել իմ մասին...

— Բա չի՞ հարցրել: Երկու անգամ:

Դրանից խթանված, էլեռնորան «Մեքենագրելու գործեր» թղթապանակի միջից հապճեպ շարժումով վերցնում էր երկու օր առաջ սկսած բոլորովին էլ ոչ շտապ մի «շտապ» գրություն, ամրացնում էր գրամեքենայի վրա, կողքին դնում էր Վարդ-Թորոսյանի դիրեկտորական լայն ձեռագրով գրված տեքստը և մեքենագրելով հերթական բառը՝ «խստիվ», շուտ էր գալիս դեպի քարտուղարուհին.

— Գիտե՞ս ինչու ուշացա, Աստղիկ: Արդեն գլխարկս էի դնում, որ դուրս գամ, հանկարծ ներս է մտնում ընկեր Արդարյանը...

Եվ սկսվում էր մի անվերջանալի պատմություն այն մյուս արհեստանոցի մասին, հույսովում էին անուններ, որոնց տերերին Աստղիկը երբեք չէր տեսել, բայց որոնց արդեն շատ լավ ճանաչում էր: Ծավալվում էին դեպքեր, բորբոքվում էին կրքեր... Եվ որտեղի՞ց էր գտնում էլեռնորան պատմելու այդքան բան մի գրասենյակի կյանքից, որն իր կազմով ավելի մեծ չէր, քան «Կենցաղային սկավառակների»», չէր տարբերվում դրանից նաև իր անցուղարձով, իր առօրյայով... Կասկած չկար, որ նա «Կենցաղային սկավառակների» արհեստանոցի մասին ոչ պակաս հետաքրքիր պատմություններ էր անում այնտեղ՝ իր մյուս աշխատավայրում:

— Երևակայիր, Աստղիկ, իմ դրույթները... Ընկեր Արդարյանը մոտենում է ինձ և հարցնում.

«Նորադուլգեցյան, որտե՞ղ է Դարչինյանը»: Ի՞նչ պատասխանեմ: Ասում եմ «գնաց բուժետ»: Ասում է՝ «Նախ, ընդմիջումը վաղուց է անցել, և երկրորդ՝ նա բուժետում չէր»: Ասում եմ «ընկեր Արդարյան...»: Երևակայում եմ, էլ ուրիշ ոչինչ չեմ կարողանում ասել, ասելու բան չունեմ... Հենց նույն րոպեին էլ, հակառակ պես, ներս է մտնում Հայկարամուհին ինքը: «Որտե՞ղ էիր, ընկեր Դարչինյան», — հարցնում է ընկեր Արդարյանը: Երևակայում եմ, թե ես ինչ վիճակի մեջ եմ ընկնում: Մտածում եմ՝ հիմա ինձ սուտ է դուրս բերելու անպիտանը: Եվ հանկարծ, ես ուղղակի չեմ հավատում ականջներին, նա ասում է՝ «բուժետում»: Կարծես նախապես պայմանավորված լինեիք: Իսկ ընկեր Արդարյանը հարցնում է քմիծաղով: «Ի՞նչ է, գործարանի բուժետում արդեն սկսել են սև կրունկներով գուլպաներ վաճառել...»: Ես նայում եմ տեղնուտեղը սոսկում:

Հայկարամուհին գուլպաները բռնել է ձեռքում, մոռացել է թաքցնել: «Տեսնեմ...», — ասում է ընկեր Արդարյանը, վերցնում է, նայում, գնում ուղղակի կանացի ուշադրությամբ, հետո ասում է.

«Լավերն են. իսկ ո՞ր խանութումն են վաճառում, հարկավոր է կնոջս համար նույնպես վերցնել»:  
Երևակայո՞ւմ ես, այլևս նկատողություն չի անում և շտապում է գուլպաներ գնելու...

Ինչպես դատարկ անոթի մեջ թողնված գազի ամենափոքրիկ քանակն անգամ ընդարձակվում,  
լցնում է ամբողջ անոթը, այնպես էլ ահա այդպիսի չկազին եղելություններն ուռճանում, լցնում էին  
Էլեոնորայի աշխատանքային օրվա դատարկությունը:

Ավարտելով կեսօրվա մեծամեծ անցքերի պատմությունը, նա անցնում էր արդեն զուտ կանացի  
թեմաների: Հակառակ «Կենցաղային սկավառակների» արհեստանոցին, այն մյուս արհեստանոցն  
իր գրասենյակով միասին գտնվում էր մի բազմահարկ շենքի ամենավերին հարկում, և Էլեոնորան,  
լուսամուտից նայելով ներքև, կարողանում էր ընտրել գլխարկների նոր ձևեր, մինչդեռ այստեղ նա  
հմտություն էր ձեռք բերում տուֆլիների հարցում:

«Խստիվ» հերթական բառը, որ միակ մեքենագրված բառն էր այդ օրվա ընթացքում, իզուր էր  
սպասում իր շարունակությանը: Էլեոնորան անընդհատ խոսում էր և խոսում:

Իր կաշվեպատ դռան ետևից Վարդ-Թորոսյանի համար, իհարկե, շատ դժվար էր որոշել՝ դա  
գրամեքենա՞ն էր չկչկում, թե՞ մեքենագրուհի՞ն: Իսկ եթե նա հանկարծ դուրս էր գալիս այնտեղից,—  
մի բան, որ պատահում էր շատ հազվադեպ,— ապա Էլեոնորան առանց դժվարության մի չկչկոցից  
վայրկենապես փոխակցվում էր մյուս չկչկոցին.— «Խստիվ արգելվում է...»,— շարունակում էր նա  
մեքենագրել:

— Դուք շա՛տ եք զբաղված,— դիմում էր վարիչը մեքենագրուհուն:

— Ոչ: Խնդրեմ:

— Լավ, ավարտեցեք էջը:

— Ես կարող եմ հանել, հետո շարունակել, ընկեր Վարդ. . .

— Խնդրում եմ: Ես կթելադրեմ...

Ու մինչդեռ Նորադուզեցյանը պատրաստվում էր գրությունը մեքենագրելու, Վարդ-Թորոսյանը,  
շարունակելով պահել կաբինետից իր հետ բերած իր «դիրքը», մտազբաղ քայլում էր սենյակով ետ  
ու առաջ՝ հակառակորդի բանակին ուղիմատում ներկայացնող զորավարի խոժոռությամբ  
մտմտալով գրության բովանդակությունը:

— Ընկեր Վարդ-Թորոսյան, երկո՞ւ օրինակից:

— Երեք:

— Ես պատրաստ եմ:

— «Մեքենայական գործարանի դիրեկտորին. պատճենը՝ Միավորմանը»: Միավորման անունը,  
իհարկե, գրել լրիվ: «Ինձ վստահված արհեստանոցի վարչությունը ձեր ուշադրությունն է  
հրավիրում...»: «Ձերը» մեծատառով: «Ձեր ուշադրությունն է հրավիրում այն փաստի վրա, որ  
հակառակ մեր միջև կնքված պայմանագրին, դուք շարունակում եք մատակարարել ոչ լրիվ  
ասորտիմենտի հումք: Այսպես, օրինակ, սույն ամսի առաջին կեսում այլումիսե հումքի տոկոսը  
կազմում էր ընդամենը...»: Ընկեր Թորոսյան, խնդրում եմ...

Թեև Վարդ-Թորոսյանը շատ լավ էր հիշում, թե որքան էր կազմում այլումիսե հումքի տոկոսը սույն  
ամսի առաջին կեսում, բայց անհարմար էր չդիմել հաշվապահության օգնությանը: Իսկ դիմել  
հարկավոր էր մի շարք նկատառումներով: Նախ՝ ցույց տալու համար, որ հազար ու մի հոգսերով  
զբաղված վարիչը կարող էր մտքում չպահել այդպիսի թվեր, երկրորդ՝ աշխատանք տալու համար  
ստորադրյալին, երրորդ՝ շոյելու համար գրասենյակի ամենաարժեքավոր աշխատակցի  
ինքնասիրությունը և այլն, և այլն:

Թորոսյանը, որ նույնպես գիտեր այլումիսե հումքի տոկոսը սույն ամսի առաջին կեսում,  
այնուամենայնիվ, հարկ էր համարում դիմել գրավոր աղբյուրների: Մի փաստաթուղթ ինքն էր  
«բարձրացնում», մի այլ փաստաթուղթ՝ «բարձրացնել» էր տալիս Աստղիկին, որից հետո  
գրամեքենան շարունակում էր չկչկալ:

— Խնդրում եմ շտապ ուղարկել,— պատվիրում էր դիրեկտորը և նորից մտնում կաբինետ՝ «դիրք  
պահելու»:

Աստղիկի համար բավական հետաքրքիր էին անցնում նաև այն օրերի առաջին կեսերը, երբ  
Էլեոնորան պատկանում էր «Կենցաղային սկավառակների» արհեստանոցին: Ծիշտ է, օրը դեռ  
Նոր էր սկսվում, Էլեոնորան չէր եկել մյուս արհեստանոցից՝ բերելով նորություններ, այլ  
ընդհակառակը, պիտի գևար՝ տանելով նորություններ, բայց և այնպես նա խոսելու կյուրե կճարեր,  
չէր կարող չճարել: Ոչ ոքի դեռ չէր հաջողվել տեսնել Էլեոնորայի բերանը տգեղ վիճակում բացի  
լուսանկարների վրա:

«Շտապ գրություն»-ը մեքենայական գործարան և Միավորման գրասենյակ տանում էր Սիրական  
Համբարձումյանը, փոքրամարմին, սիհար, բայց ծայր աստիճան աշխույժ մի մարդ, արդեն  
հիսունհինգ տարեկան: Ամեն անգամ նա բարկացած էր վերցնում գրությունն Աստղիկից.

— Ես հո ցրիչ չե՛մ: Տրիչ պահեցեք ձեզ համար: Ես էքսպեդիտոր-ծախսարար, գանձապահ-  
ինկասաստոր, պահեստապետ-ապրանքագետ եմ: Զի՞ջ հոգս ունեմ:

Հոգսեր նա, իսկապես որ, շատ ուներ: Ըստ իր նոմինալ արժեքի, նա արհեստանոցի գրասենյակի  
երկրորդ աշխատակիցն էր՝ Արիստակես Թորոսյանից հետո: Բայց ըստ իր ռեալ արժեքի, նա

անկասկած առաջինն էր: Նա էր առևտրական հիմնարկների ղեկավարներին համոզում՝ գնել արհեստանոցի արտադրանքը, և պայմանագրեր էր կնքում նրանց հետ, նա էր մեքենական, մեքենաշինական և այլ գործարաններում իր սեփական ձեռքերով խառնուտում, տակնուվրա անում արտադրության մնացուկների հսկայական կույտերը՝ բակերում դիզված, և այնտեղից ընտրում շտամպելուց հետո մնացած մետաղյա այնպիսի կտորտանքներ, որոնք կամ լրիվ կլորտափակ էին, կամ առավել չափով մոտիկ էին կլորտափակ ձևին և չէին պահանջում կամ ոչ մի մշակում, կամ համարյա ոչ մի... Անհնար և ավելորդ է թվարկել նրա մյուս գործերը: Այդքանն էլ բավական է, որ նա համարվի արհեստանոցի գլխավոր սյունը՝ Վարդ-Թորոսյանի աջ թևը: Սիրական Յամբարձումյանն ուներ կին, տղաներ, աղջիկներ, հարսներ, փեսաներ, թոռներ: Նա ազատ կերպով կարող էր չաշխատել: Բայց նրա փոքրիկ մարմնի մեջ դեռ այնքան մեծ եռանդ կար, որ եթե նա չաշխատեր, այդ եռանդը, ինչպես ինքն էր ասում, «ներսից կուտեր նրան»:

Այդ բանը չէին հասկանում նրա զավակները և մանավանդ կինը, որոնք շարունակ համոզում էին նրան՝ մնալ տանը և խաղալ թոռների հետ: Յատկապես նրա կինը կասկածում էր, որ ամուսնու համառորեն աշխատել ցանկանալու մեջ «կնոջ մատ» կար խառը: Նա պնդում էր, որ Սիրականը քսանհինգ-երեսուն տարի առաջ մի շարք լուրջ հիվանդություններ էր տվել այսօրվա կասկածների համար: Ամուսնուն կարևոր բան ասելու պատրվակով կինը մի անգամ գնացել էր «Կենցաղային սկավառակների» արհեստանոցի գրասենյակ, տեսել էր քարտուղարուհուն և այժմ ամեն առավոտ ամուսնուն աշխատանքի էր ճանապարհ դնում նույն խոսքերով.

— Գնա, Աստղիկը քեզ է սպասում, թոռան տեր երիտասարդ...

Սիրական Յամբարձումյանն անփոխարինելի էր նաև մի այլ տեսակետից. նա «Կենցաղային սկավառակների» արհեստանոցի «բացասական տիպն» էր:

Այս բանը կարիք ունի հատուկ բացատրության:

Վաղուց էր, ինչ արհեստանոցի գործերը գնում էին լավ, առանց թերակատարման, առանց խոտանի, որակային ու քանակային բարձր ցուցանիշներով և այլն, և այլն: Այնքան լավ էին գնում արհեստանոցի գործերը, որ դա ուղղակի անհավատալի էր: Եվ իրոք, Միավորման մեջ շատերը չէին էլ հավատում: Անժխտելի փաստերն աչքի առաջ էին, շատ անգամներ ստուգված ու վերստուգված, բայց նրանք դարձյալ չէին հավատում: Այսինքն՝ նրանք չէին հավատում ոչ թե փաստերին, այլ այն բանին, որ արհեստանոցը նվաճումների կողքին չունի նաև թերություններ կամ գոնե մի բացասական կողմ:

— Զուկի, եղբայր, չունի, ես գոռով թերությունն ստեղծեմ ձեզ համար,— վրդովվում էր Վարդ-Թորոսյանն սկզբներում:

— Ես հո չե՞մ ասում, թե իմ շնորհիվ է: Գուցե իմ նախորդների շնորհիվ է, գուցե նրանից է, որ մեր գործն ինքնին շատ փոքր է, ուղղակի չնչին, և գերե՞մ մեծ գործերին հատուկ թերություններից, աճման դժվարություններից և այլն: Ես չգիտեմ, թե ի՞նչն է պատճառը, բայց մի՞թե պատճառն ավելի կարևոր է, քան հետևանքը: Իսկ հետևանքն այն է, որ մեր արհեստանոցը չունի թերություն, եղբայր, չունի: Ես մեղավոր եմ, որ նա լավ է աշխատում:

Բայց քանի որ Միավորման մեջ մարդիկ շարունակում էին թերահավատորեն օրորել գլուխները, Վարդ-Թորոսյանը վերջ էր վերջո ստիպված եղավ տեղի տալ: Թերություններ դարձյալ չկային, բայց նա վճռեց առաջին իսկ չնչին առիթն օգտագործել, ուռճացնել, տալ դրան թերության բնույթ, պայքար ծավալել դրա դեմ և գոհացնել Միավորման ընկերների պահանջը:

Առիթը տվեց Սիրական Յամբարձումյանը: Մի անգամ նա ուշացրեց հումքի փոխադրումը գործարաններից մեկից արհեստանոց, և արհեստանոցն ստիպված եղավ ամբողջ երեք օր աշխատել ոչ լրիվ բեռնվածությամբ, թերակատարել իր պլանը: Ճիշտ է, չորրորդ օրը մի երկու ժամվա ընթացքում հնարավոր եղավ լիովին փակել ճեղքվածքը, բայց դա չխանգարեց Վարդ-Թորոսյանին՝ ահագանգ խփել, հրավիրել արտադրական խորհրդակցություն, քննել Սիրական Յամբարձումյանի հարցը: Բոլոր նյութերը նա շտապեց ուղարկել Միավորում, որտեղ մարդիկ ասացին.

— Այ, տեսնո՞ւմ ես, Վարդ-Թորոսյան, ուշադիր նայելու դեպքում ամեն տեղ էլ թերություն կճարվի: Թե չէ՝ մենք էլ էինք զարմանում այդ ի՞նչ բացառություն է «Կենցաղային սկավառակների» արհեստանոցը Երևանի մեծ ու փոքր բոլոր ձեռնարկությունների մեջ: Աստված է Վարդ-Թորոսյանը, ի՞նչ է: Դե այժմ գնա և ծավալիր քեզ մոտ քննադատությունն ու ինքնաքննադատությունը...

Սիրական Յամբարձումյանը, զարմացած և զայրացած այն բանից, որ վարիչը, չգիտես ինչու, այդքան ուռեցրել էր այդ աննշան դեպքը, որպիսիք առաջ էլ էին տեղի ունեցել և առաջ էլ ոչ մի վատ հետևանք չէին թողել, հենց հետևյալ արտադրական խորհրդակցության ժամանակ հարձակվեց Վարդ-Թորոսյանի վրա՝ նրան մեղադրելով արհեստանոցի բանվորական մասսաներից կտրված լինելու և ուրիշ այդպիսի մեղքերի մեջ:

Զափազանց զայրանալով նրա վրա, Վարդ-Թորոսյանը պատրաստվում էր հանդես գալ հերքումով, բայց հանկարծ կծեց լեզուն: Իսկ խորհրդակցության վերջում ունեցավ մի կարճ ելույթ, որտեղ ընդունեց իր մասին եղած քննադատության արդարացիությունը:

Չեռնայալ օրը Միավորման մեջ մեծ բավականությամբ կարողացին «Կենցաղային սկավառակների» արհեստանոցի վարիչի ռապորտը, որտեղ հաղորդվում էր, որ արհեստանոցում սկսել է ծավալվել քննադատությունն ու ինքնաքննադատությունը, ընդ որում՝ սկսել է ծավալվել ներքևից: Բայց Վարդ-Թորոսյանը Սիրական Չամբարծումյանի՝ Նրա վրա կատարած հարձակումը միտքը պահեց և պրոֆմիության առաջին իսկ ժողովում հանեց Նրանից իր ոխը:

Սիրական Չամբարծումյանը խելոք ծերունկ էր և շատ շուտով գլխի ընկավ, թե ի՞նչ էր պահանջվում Նրանից: Փոխանակ լռելու, նա դրանից հետո ևս շարունակեց ամեն առիթով քննադատել արհեստանոցի և դրա վարիչի թերությունները՝ դիտմամբ չափազանցելով դրանք, իսկ երբեմն էլ բարդելով ուղղակի անհիմն մեղադրանքներ: Այսպիսով նա հնարավորություն էր տալիս վարիչին, նախ՝ հուր ու կայծակ թափելով Նրա վրա, ավելի ամրացնել իր անխախտ հեղինակությունը, երկրորդ՝ ծավալել քննադատություն և ինքնաքննադատություն, երրորդ՝ անցկացնել լայն դեմոկրատիա, և վերջապես, չորրորդ՝ ցույց տալ, որ իրոք, արհեստանոցում կան նաև թերություններ: Ընդ որում, այժմ արդեն թերություն անվան տակ հասկացվում էին ոչ թե արտադրության մեջ գոյություն ունեցող ինչ-ինչ բացեր, այլ հենց Նրա՝ Սիրական Չամբարծումյանի անձնավորությունը: Նա լուռ համաձայնությամբ իր վրա էր վերցրել՝ լինել այն «բացասական տիպը», որը դեռ գոյություն ունի մեր կյանքի զանազան օղակներում, որը, չի կարող պատահել, որ գոյություն չունենա, հարկավոր է միայն լավ փնտրել Նրան, և կգտնես: Այդպիսի դերաբաժանությունից հետո արհեստանոցի բոլոր արտադրական խորհրդակցությունները, պրոֆմիության ժողովները և այլ հավաքույթներն սկսեցին անցնել աշխույժ, հետաքրքիր, և բանավորներն ու ծառայողներն այլևս չէին խուսափում դրանց հաճախելուց:

— Թող հայտնի լինի Չամբարծումյանին և նմաններին,— զայրացած ձայնով բռունցք էր ճոճում Վարդ-Թորոսյանն այդ հավաքույթներում,— որ մենք թույլ չենք տա քննադատության անվան տակ կազմալուծել արհեստանոցի աշխատանքը... Մի՛ խանգարեք, ընկեր Չամբարծումյան, մենք ձեզ լսեցինք ամենայն համբերությամբ, մեր զայրույթը զսպած, իսկ հիմա ինքներդ լսեցեք մեզ... Երբ նա, ընկերներ, իրավացիորեն քննադատում է մեր թերությունները, մենք, ընկերներ, շնորհակալություն ենք հայտնում Նրան: Բայց երբ նա, ընկերներ, ծռում է փայտը, մենք, ընկերներ, պետք է խփենք Նրան, և խփենք ձեռնարկության արտադրական դիսցիպլինայի ամբողջ թափով...

Լսում էր Սիրական Չամբարծումյանը Նրան և քթի տակ ծիծաղում: Նա շատ լավ գիտեր, որ «ամբողջ թափով» չեն խփի Նրան, որովհետև նա հարկավոր էր նաև հաջորդ ժողովի համար, էլ չասած այն մասին, որ անփոխարինելիորեն հարկավոր էր արհեստանոցի համար: Եվ իրոք, երբ տեղկոմի նախագահ Աստղիկ Մարգարյանը, մտնելով վարիչի մոտ, Նրա հետ համաձայնեցնում էր պրոֆմիության հերթական ժողովի օրը, Վարդ-Թորոսյանը պատվիրում էր Նրան.

— Ապահովեցեք Չամբարծումյանի ներկայությունը... Եթե մինչ այդ արհեստանոցի միակ թերությունն այն էր, որ նա չուներ ոչ մի թերություն, ապա այժմ վերացվել էր նաև այդ միակ թերությունը:

## 7

Սպասելով, մինչև որ ձևակերպեն իրեն, Գարեգին Սարոյանը նստեց ազատ աթոռներից մեկի վրա և սկսեց նայել շուրջը: Ընդհանուր առաջ, նայելու բան էլ չկար: Երկու սեղաններ շարունակում էին մնալ ազատ, իսկ մյուս երկուսի մոտ աշխատում էին տարիքոտ տղամարդն ու երիտասարդ կինը: Տարիքոտ տղամարդն այն Թորոսյանն էր, որ առանց Վարդի էր: Նա Վարդ-Թորոսյանից մեծ էր ուղիղ տասը տարով, այսինքն՝ քառասուներկու տարեկան էր: Նա պատկանում էր հաշվապահների այն կատեգորիային, որոնք հաշվապահական դասընթացները հաճախելու առաջին շրջանում չեն ցուցաբերում ոչ մի ընդունակություն, ոչ մի առաջադիմություն, բայց լինելով եզան համառության տեր, ունենալով եզան առողջություն և չվախենալով եզան պես աշխատելուց, գիշեր-ցերեկ տնքում են իրենց գիտության վրա և վերջապես նվաճում այն, նվաճում տանջալիորեն դանդաղ, դժվար, ժամեր շարունակ գլուխ կոտրելով ամեն մի տերմինի կամ թվանշանի վրա: Բայց նվաճելուց հետո Նրանք դառնում են այն աստիճան հաշվապահ, որ Նրանցից ավելի հաշվապահ չի կարելի գտնել ոչ մի տեղ: Դասընթացներն ավարտած մյուս մարդիկ ժամանակի ընթացքում մաղվում են, ոմանք բոլորովին ձեռք են քաշում հաշվային աշխատանքից, ոմանք մնում են որպես հավիտենական հաշվետարներ, ոմանք տարիներ շարունակ լավ աշխատելով հաշվապահի պաշտոնում, առաջ են քաշվում որպես պլանային աշխատողներ, նախագծային բյուրոների ղեկավարներ, դիրեկտորներ, բայց Թորոսյանի տիպի հաշվապահները հաշվապահ են մնում մինչև վերջը: Այդ մասնագիտությունը Նրանց համար ոչ պատահական բան է և ոչ էլ տրամալին՝ հետագայում ավելի բարձր տեղեր ցատկելու համար: Նրանք հաշվապահներ են՝ դրանով ամեն ինչ ասված է:

Արիստակես Թորոսյանը՝ նույնպես բարձրահասակ, հաղթանդամ, բայց արհեստանոցի վարիչից ավելի թուխ և արդեն բավական ճաղատ, դասընթացներն ավարտելուց համարյա անմիջապես հետո ամբողջ քսան տարի աշխատել էր որպես Երևանի ամենախոշոր ձեռնարկությունների գլխավոր հաշվապահ: Դիրեկտորները կոմուն էին նրա համար և երբեմն այն հարցը, թե ո՞ւմ մոտ պետք է աշխատի Թորոսյանը, հասնում էր մինչև միևնույնությունները: Չկար համարյա ոչ մի էքսպերտ-հանձնաժողով, ուր չհրավիրեին Թորոսյանին: Չկար համարյա ոչ մի խոշոր ձեռնարկության տարեկան հաշվետվություն, որը դիրեկտորների խնդրանքով աչքի չանցկացներ նա:

Լինելով օրինակելի ընտանեւներ, ունենալով համալսարանում սովորող տղա, միջնակարգ դպրոցում սովորող աղջիկ և ոչ մի տեղ չսովորող, բայց շարունակ ամուսնուն խելք սովորեցնող կին, իր խնամքի տակ գտնվող մայր ու քեֆի, որ նույնպես ուսանողուհի էր, սիրելով լավ ուտել-խամել, Արիստակես Թորոսյանը չէր հրաժարվում ոչ մի կողմնակի աշխատանքից, եզան հանգստությամբ կատարում էր այնքան գործ, որը կբավականացներ մի ամբողջ հաշվապահության գրասենյակի, և ոչ ոք չէր կարող ասել, թե երբևէ նկատել էր նրան հոգնած: Եվ հանկարծ մի օր, բոլորի համար անսպասելի, առանց որևէ նկատելի պատճառի՝ ո՛չ իր համար, ո՛չ ուրիշների, նա սկսեց խմել: Մի քանի ամսում նա հասավ իսկական հարբեցողի վիճակի, խառնեց բոլոր հաշիվները, դադարեց կանոնավոր աշխատանքի հաճախելուց, և ստիպված եղան զատել նրան աշխատանքից: Մի ուրիշ խոշոր ձեռնարկություն իսկույն հրավիրեց նրան և ճիշտ հետևյալ օրը նույնպես ազատեց: Դրանից հետո այլևս ոչ մի գործարան, նույնիսկ ոչ մի արտել չվստահեց ընդունել նրան: Ասենք նա ինքն էլ չէր դիմում:

Կարճ ժամանակամիջոցում Թորոսյանը խմեց իր խնայած բավական մեծ գումարը, ընտանիքին հասցրեց նյութական ծանր դրության: Համալսարանում սովորող նրա տղան ստիպված եղավ մի տարով տարկետում վերցնել և մտնել աշխատանքի: Կնոջ քույրը փոխադրվեց իր ամուսնացած եղբոր մոտ:

Վեց ամիս հարբեցողությամբ զբաղվելուց, իր բարի անունը բոլորի աչքում կոտրելուց հետո, երբ բոլորը ձեռք էին քաշել նրանից, նա հանկարծ, նույնքան անսպասելի, դադարեց խմելուց: Սկզբում ոչ ոք չհավատաց դրան, կարծեցին, թե նա պարզապես միջոցներ չունի խմիչք գնելու: Բայց երբ այդ վիճակը շարունակվեց մի քանի շաբաթ, ընտանիքին պաշարեց մի այնպիսի ցնծություն, ինչպես մեռած մարդու հարություն առնելուց հետո:

Ամենաապշտեցուցիչն այն էր, որ նա, դադարելով խմելուց, չէր ընկել հակառակ ծայրահեղության մեջ՝ ոչ մի կաթիլ բերանը չառնելով, ինչպես վարվում են թույլ կամքի տեր մարդիկ՝ վախենալով չկարողանալ կանգ առնել պատշաճ կետում և գնալ մինչև վերջը: Նա իջել էր խմելու այն համեստ աստիճանին, որի վրա եղել էր անցյալում և որի մեջ չկար ոչ մի դատապարտելի բան:

Հաշվապահ Թորոսյանի բուժման լուրը շուտով տարածվել էր քաղաքի խոշոր դիրեկտորների շրջանում: Բայց դեռ շատ թարմ էր նրա խայտառակ անկման հիշողությունը:

Թերահավատությունն ու զգուշությունը թույլ չէին տվել նրանց՝ իսկույն աշխատանքի հրավիրել իրենց նախկին խոշոր աշխատակցին, և Թորոսյանն ինքն էլ չէր դիմել՝ ըստ երևույթին շատ լավ հասկանալով հանգամանքները: Երբ Վարդ-Թորոսյանը պատրաստակամություն էր հայտնել ընդունել նրան իր մոտ, նա համեստաբար համաձայնել էր անմիջապես: Եվ այժմ խոշոր դիրեկտորները լարված հետևում էին նրա վարքին: Բոլորին, այդ թվում նաև իրեն՝ Թորոսյանին ակնհայտ էր, որ նա անցնում է փորձաշրջան: Կանցնի էլի մի փոքր ժամանակ և դիրեկտորները նորից կսկսեն ձեռքից ձեռք խելել անվանի հաշվապահին:

Ինչպես փոքրիկ լճակի մեջ ընկած հսկայական ձուկ, կարոտ մեծ ջրի, շարժման, Թորոսյանը կարոտում էր հաշվապահական իսկական աշխատանքի: Գոնե մի փոքր հագուրդ տալու համար այդ կարոտին, նա «Կենցաղային սկավառակների» գործարանային տիպի արհեստանոցի հաշվային գործերը վարում էր ըստ բոլոր կանոնների, տրեստային և կոմբինատային լրջությամբ: Արհեստանոցի գրասենյակում և վարիչի կաբինետում հնչում էին հաշվապահական ամենապատկառելի տերմիններ՝ կոնտոկորենտ, ակցեպտ, ավիզո...

Աշխատանքային օրվա առաջին թոպեից մինչև վերջին թոպեն նա զբաղված էր լինում: Անդադար լավում էր հաշվիչի չխկչխկոցը կամ խշխշում էին մատյանների ու «գործերի» թերթերը:

Ի՛նչ էր հաշվում Արիստակես Թորոսյանը, ինչո՞վ էր լցնում նա իր աշխատանքային օրը... Յոթ բանվորների համեստ արտադրանքի հետ կապված բոլոր հաշիվներն անելու համար նրան լիովին բավական էր ամսական մի ժամ: Բայց սերը դեպի իր գործը նրան դարձրել էր հնարագետ, նա միշտ գտնում էր հաշվելու որևէ բան՝ ներկա, անցյալ կամ ապագա:

— Ապա, Աստղիկ, բարձրացրու մայիս ամսվա հունքի ստացման դոկումենտը, — երբեմն դիմում էր նա քարտուղարուհուն այսպիսի հանձնարարությամբ: Եվ քարտուղարուհին գրասենյակի համեստ արխիվից, որը գրավում էր պահարանի մի քառորդից մի փոքր պակաս տեղ, «բարձրացնում» էր փաստաթուղթը:

Աստղիկ Մարգարյանը ոչ միայն բոլորովին դեմ չէր լինի, այլև շատ կուրախանար, եթե հաշվապահը հաճախ դիմեր նրան այդպիսի հանձնարարություններով: Նա ձանձրանում էր

անգործությունից: Բայց դրանից ավելի նրան տանջում էր խիղճը, նա չէր ուզում ձրի հաց ուտել, նա ուզում էր արդարացնել իր ստացած աշխատավարձը:

Նրա ամուսինը՝ Նորավարտ Էլեկտրատեխնիկ, որն այժմ աշխատում էր Էլեկտրասարքավորումների գործարանում, տուն էր գալիս շատ աշխատած և առույգ: Աստղիկը գալիս էր ոչինչ չարած և հոգևած: Ամուսինը նրան պատմում էր շատ հետաքրքիր պատմություններ գործարանի իրական կյանքից: Աստղիկը նրան պատմում էր համարյա նույնքան հետաքրքիր բաներ, բայց գրեթե, որոնք նա կարդում էր կիսաբաց դարակի մեջ դրած՝ կաշվեպատ դռան բացվելուն պես դարակն իսկույն ծածկելու համար: Վարդ-Թորոսյանը պահանջում էր, որ բոլորն զբաղված լինեին իրենց աշխատանքներով:

«Կենցաղային սկավառակների» արհեստանոցի գրասենյակում իր աշխատանքի մեկ ու կես տարվա ընթացքում Աստղիկ Մարգարյանը դարձել էր կարդացած, զարգացած անձնավորություն: Նա սպառել էր իր բոլոր ընկեր-ընկերուհիների գրադարաններում եղած ամբողջ գեղարվեստական գրականությունը, անցել էր փիլիսոփայական գիտությունների, ճանապարհների շինարարության և ընդհանրապես բոլոր այն դիսցիպլիններին, որոնցով զբաղվում էին նրա ծանոթները: Այժմ նա հեռակայում էր մի ինստիտուտի: Ժամանակը լիովի բավականացնում էր:

Բայց, ինչպես հայտնի է, անդադար չի կարելի կարդալ, կհոգնես: Աստղիկն զբաղվում էր նաև իր դեմքի մանրակրկիտ ուսումնասիրությամբ: Կլոր, փոքրիկ հայելին բռան մեջ թաքցրած, նա տասնյակ րոպեներ շարունակ նայում էր ինքնիրեն և ամենաբարյացակամ կերպով ժպտում: Այա հանկարծ նա մռայլվում էր՝ նկատելով սպիտակ մազ իր քսաներեքամյա գլխի վրա: Սակայն ամեն անգամ դուրս էր գալիս, որ դա սպիտակ մազ չէր, այլ իր սև մազերից մեկը՝ առանձնակի փայլող: Իր դեմքի և պարանոցի վրա Աստղիկը հայտաբերել էր երեք փոքր խալեր և տասնչորս շատ փոքրերը, և դեռ շարունակում էր հայտաբերել նորերը՝ ինչպես ուշադիր աստղագետն է գտնում նորանոր աստղեր՝ աստղադիտակով երկնքին նայելիս:

Ավարտելով իր դեմքի գիտա-հետազոտական զննությունը, Աստղիկն սկսում էր դուրս նայել լուսամուտից: Երբ պատրաստվում էր պատվիրել նոր տուֆլիներ, նա լուսամուտից նայում էր տուֆլիների լավ ձևեր ընտրելու համար: Իսկ երբ չունեիր այդպիսի նպատակ՝ զբաղվում էր վիճակագրությամբ, հաշվում էր, թե քանի՞ տղամարդ է անցնում և քանի՞ կին: Տղամարդիկ միշտ ավելի շատ էին անցնում, քան կանայք, որից նա եզրակացնում էր, որ Երևանում սեռերի հարաբերությունը կազմում է 571-384: Կանայք քիչ են: Ահա թե ինչու,— եզրակացնում էր նա,— փողոցով նրա անցնելիս տղամարդիկ այնպես նայում են նրան: Աստղիկ Մարգարյանը համեստ կին էր, նա չգիտեր, որ ինքը գեղեցիկ էր:

Նա դեռ ձևակերպում էր Գարեգին Սարոյանին, երբ գրասենյակ մտավ մի ուրիշ տղամարդ՝ միջին տարիքի, և մոտենալով հաշվապահին, հարցրեց.

— Ո՞վ է այստեղ Թորոսյանը:

— Դուք Թորոսյանի՞ն եք ուզում թե Վարդ-Թորոսյանին,— տվեց Արիստակեսն իր սովորական հարցը՝ շարունակելով ինչ-որ բան հաշվել հաշվիչի վրա, միաժամանակ մյուս ձեռքի մատները սահեցնելով ինչ-որ ցուցակի վրայով:— Ապա, Աստղիկ, բարձրացրու նախանցյալ տարվա հուլիսի 14-ի մեր արձանագրությունը...

— Ոչ, առանց Վարդի: Ինձ հարկավոր է Արիստակես Թորոսյանը,— ճշտեց այցելուն:—

Հաշվապահը: Դա, իհարկե, դուք եք:

Արիստակեսը զարմացած բարձրացրեց գլուխը:

— Թույլ տվեք ծանոթանալ,— ժպտաց այցելուն:— Ես հանքային ջրերի տրեստի դիրեկտորն եմ: Խնդրում եմ երեկոյան անցնեք մեր մինիստրություն: Մինիստրի մոտ կլինի նաև ձեր միավորման նախագահը: Հարցը վերաբերում է ձեզ: Հրավիրում ենք մեզ մոտ աշխատելու՝ որպես տրեստի գլխավոր հաշվապահ: Եթե, իհարկե, չեք առարկում...

Փոքրիկ կլոր հայելին, որի մեջ Աստղիկ Մարգարյանն արդեն գտել էր քսանյոթերորդ խալն իր դեմքի վրա՝ անգնն աչքով հագիվ նկատելի, վար ընկավ նրա ձեռքից՝ ուղղակի գրասենյակի կիսաբաց դարակի մեջ, հեռակա դասընթացների դասագրքի վրա:

— Ես... ես հաճույքով...— կմկմաց ուրախությունից կակազել սկսած Թորոսյանը:

— Ուրեմն հիանալի է, երեկոյան համեցեք,— կրկնեց այցելուն և ժպտաց:— Ներեցեք, որ շտապում եմ: Շատ, շատ ուրախ եմ, որ համաձայնեցիք... Ընկեր Արիստակես...

— Ընկեր Արիստակես...— բացականչեց Աստղիկը՝ հանքային ջրերի տրեստի դիրեկտորի գնալուց հետո,— շնորհավորում եմ: Նորից դուրս եք գալիս լայն ճանապարհի վրա:

Թորոսյանը ոչինչ չգտավ պատասխանելու, նա հուզված էր: Նա արդեն իր աչքի առաջ տեսնում էր իր հաշիվների ապագա օբյեկտները՝ շշեր, շշեր, շշեր... Բայց դրանք այն շշերը չէին, որոնք քիչ մնաց անդառնալի կերպով կործանեին նրան: Այդ շշերը պարունակում էին «Արզնի», «Դիլիջան», «Ջերմուկ»... . .

Հանկարծ Թորոսյանի աչքն ընկավ իր առջև դրված այն փաստաթղթի վրա, որ քիչ առաջ, «բարձրացրել» էր Աստղիկը: Եվ նա մեծ տարակուսանքով, անկեղծ զարմանքով նայեց դրան: Ի՞նչ

գործ ունենալ այդ դատարկ, ավելորդ, բյուրոկրատական թղթի կտորն իր սեղանի վրա... Ինչո՞ւ համար պիտի նա զբաղեցնեն խոշոր հաշվապահ Արիստակես Թորոսյանի ուշադրությունը... . .

— Աստղի՛կ,— բացականչեց հաշվապահը,— իջեցրու այդ փաստաթուղթը, իջեցրու... . .

Այդ ժամանակ աշխույժ քայլերով գրասենյակ մտավ Սիրական Յամբարձումյանը՝ սապրզներ հագած, ոտքերը լայն-լայն դնելով, կարծես ձիուց էր իջել՝ երկար ճանապարհ գալուց հետո, և դեռ չէր կարողանում կանոնավոր քայլել ոտքով: Արագ հանելով գլխարկը և դնելով իր սեղանի վրա, նա բաց արեց արհեստանոցի դուռը և հաղորդեց.

— Տղաներ, բեռնատար տաքսին նրբանցքումն է, դարպասի մոտ: Շատ են հումք ճարել, կբավականացնի երկու շաբաթ: Բայց հարկավոր է խնամքով ծախսել, որովհետև այն տասնօրյակում ուրիշ հումք չի լինելու: Դե ուրեմն, ձեզ տեսնեմ, թեք դուրս, կրեցեք ներս... Բոլոր բանվորները, ինչպես նաև Արիստակեսն ու Աստղիկը, թողեցին իրենց գործերը և սկսեցին Սիրական Յամբարձումյանի բերած հումքը կրել արհեստանոց: Օգնեց նաև Սարոյանը: Հումքը ներս բերելուց հետո բոլորը նորից անցան իրենց գործերին, և Աստղիկը շարունակեց «ձևակերպել» նոր բանվորին: Սիրական Յամբարձումյանը նորից էր գնալու գործերով և վերադառնալու էր միայն աշխատանքային օրվա վերջին: Աստղիկ Սարգսյանը մի պահ ընդհատեց իր գործը և շտապեց հաղորդել ծերունուն օրվա նորությունը.

— Ընկեր Յամբարձումյան, շնորհավորեցեք ընկեր Թորոսյանին, նա շուտով հեռանալու է մեր մոտից:

— Շնորհավորում եք ձեր մոտից հեռանալու համա՛ր...— կես-կատակ, կես-լուրջ հարցրեց նոր բանվորը:— Ուրեմն ինձ էլ պիտի ցավակցություն հայտնեք ձեզ մոտ ընդունվելուս համար... Բարտուղարուհին բարկացած նայեց նրան՝ անտեղի կատակի համար և, շուտ ազատվելու համար նրա ներկայությունից, գրչի մի հարվածով ձևակերպեց-ավարտեց նրան: Թևերը քշտելով վեր, նոր բանվոր Գարեգին Սարոյանը մտավ արհեստանոց...

## 8

Երբ Գարեգին Սարոյանը բաց արեց արհեստանոցի յուղոտված դուռը և մտավ այնտեղ, նրա ուղղակի ականջի մոտ հնչեց «կռներ» բացականչությունը, որին հաջորդեց ֆուտբոլային դատավորի սուլիչը:

Գարեգինը կանգ առավ զարմացած: Արհեստանոցի լուսամուտները նայում էին դեպի բակ: Բոլոր երեք լուսամուտները բաց էին և արհեստանոց էր ներխուժում ֆուտբոլ խաղացող երեխաների ուրախ աղմուկը: Լուսամուտներից մեկի մոտ, մի դազգահի կողքին, կանգնել էր մի պատանի՝ սուլիչը բերանին, և ուշադիր ու լարված նայում էր բակում կատարվող խաղին:

Արհեստանոցի պատերը զարդարված էին պլակատներով ու կոչերով: Պլակատները երկու տեսակի էին՝ ընդհանուր քաղաքական բովանդակության և անվտանգության տեխնիկային նվիրված: Կոչերը գրված էին գրասենյակի աշխատակիցների ձեռքերով և վերաբերում էին արհեստանոցի ներքին կյանքին:

«Ապահովենք բնակչությանն անհրաժեշտ քանակությամբ սկավառակներով»,— ասում էր գլխավոր կոչը՝ դիմացի պատի վրայից: «Տոտիկներ,— ահա մեր նեղ տեղը» — գրված է լուսամուտների դիմացի պատի վրա: Եվ, ապա, անմիջապես դրա տակ՝ «Յուրաքանչյուր բանվորի ապահովենք անհրաժեշտ քանակությամբ տոտիկներով»:

«Տոտիկ» բառն արհեստանոցի տեխնիկական տերմիններից մեկն էր և մարդկանց ականջները վաղուց էին վարժվել դրան: Վարդ-Թորոսյանն ու պարզապես Թորոսյանը, երկուսն էլ բարձրահասակ, հաղթանդամ, երկուսն էլ միանգամայն լուրջ մարդիկ, հաճախ էին մտահոգված և գործնական տոնով խոսում տոտիկների մասին՝ այդ բառը գործածելով «բալանս», «կրեդիտ», «ընթացիկ հաշիվ» և այլ պատկառելի բառերի հետ:

Բոլորի մտապատկերներում «տոտիկներ» բառն այնպես էր շաղկապվել իր մասնագիտական բովանդակության հետ, որ երբ մի անգամ Սիրական Յամբարձումյանը կոմպլիմենտ արեց Աստղիկ Սարգսյանին՝ «ինչ լավ տոտիկներ ունեք», Աստղիկն իր աչքի առաջ պատկերացրեց «տաք առարկաների» տակդիր-սկավառակների հաստիկ ու կարճիկ տոտիկները և չափազանց վիրավորված պատասխանեց.

— Տոտիկները ձերն են, իմը ոտքեր են:

Եվ վերջապես, դրան վերևում գրված էր. «Ընթացիկ եռամսյակում բարձրացնենք աշխատանքի արտադրողականությունը՝ ևս տասը տոկոսով»:

Այս վերջին կոչը հնությունից բավական գունաթափվել էր և կարող էր թվալ, թե դա ժամանակավրեպ մի կոչ էր, որը պարզապես մոռացել էին հանել: Բայց իրականում բոլորովին հակառակն էր: Դա ամենաթարմն էր բոլոր կոչերից: Արհեստանոցը վաղուց էր բնակչությանն ապահովել անհրաժեշտ քանակությամբ սկավառակներով, տոտիկները վաղուց էին դադարել նեղ տեղ լինելուց և դրանց վերաբերյալ կոչերը կարելի էր արդեն իջեցնել վար, բայց աշխատանքի արտադրողականությունը տասը տոկոսով բարձրանում էր յուրաքանչյուր եռամսյակում և ուրեմն

վաղուց խփված ու բավական խուճացած այդ կոչը վերաբերում էր բոլոր տարիների բոլոր եռամսյակներին:

Տարեկան քառասուն տոկոս արտադրողականության բարձրացում... Ուրիշ ի՞նչ արհեստանոց կարող էր հասնել Վարդ-Թորոսյանի արհեստանոցի ետևից...

Տոտիկներին վերաբերող կոչերի տակ, հենց «տոտիկներ» բառի տակ, աշխատում էին չափազանց իրար նման երկու ծերունիներ՝ վարպետ Վարդանը և ուստա Առաքելը: Դեռ հեղափոխությունից առաջ նրանք աշխատել էին ինչ-որ Հովնաթանյանների մեքենայական արհեստանոցում, ապա, խորհրդային տարիներին՝ մահճակալների գործարանում: Նրանք ունեին հին բանվորների տիպիկ, ուղղակի պլակատային դեմքեր. հնաձև ակնոցներ, բերանը ծածկած բեղեր՝ արդեն սպիտակ, զբաղված մարդու խիստ աչքեր՝ բարի մարդու ժայտացող արտահայտությամբ:

Ապրելով իրենց դարը, ընդ որում ամբողջ ժամանակ աշխատելով կողք կողքի, իրենց միևնույն հաստոցների վրա, նրանք ծերացել էին այդ հաստոցների պես, հասել կենսաթոշակի և թողել աշխատանքը: Սակայն Հայրենական պատերազմի տարիներին նրանց նորից աշխատանքի էր հրավիրել «Կենցաղային սկավառակների» արհեստանոցը, որն այն ժամանակ կոչվում էր «Արտել մանր-մուկեր»: Ծերունիներից մեկն իսկույն համաձայնել էր: Որքան մեծ էր եղել նրա ուրախությունը, երբ առաջին անգամ մտնելով արհեստանոց, նա տեսել էր այնտեղ իր ծեր ընկերոջ հաստոցը: Սկսել էր աշխատել դրա վրա: Որոշ ժամանակ հետո աշխատելու պատրաստակամություն էր հայտնել նաև մյուս ծերունին: Ինչ-որ գործարանի բակում, ջարդելու համար դրված երկաթեղենի միջից, գտել-բերել էին նաև մյուս հաստոցը: Եվ ստացվել էր այնպես, որ նրանք սկսել էին աշխատել մեկը մյուսի հաստոցի վրա: Այդ բանը համարելով տանկային տարիների իրենց մտերմության լավ նշան, նրանք այլևս չէին փոխել հաստոցները, միայն թե ուշի-ուշով հետևում էին, որ ընկերը լավ վարվի իր հաստոցի հետ: Այդ հողի վրա նրանց միջև երբեմն-երբեմն տեղի էին ունենում լուրջ ընդհարումներ:

Ծիշտ է, արհեստանոցի աշխատավարձը բարձր չէր, բայց, դրա դիմաց, աշխատանքն էլ մի բան չէր: Կարելի էր ծերունիավարի, հանգիստ կատարել պլանները և տալ նախապես սահմանված տասը տոկոս գերակատարումը:

Վարպետ Վարդանի և ուստա Առաքելի կողքին աշխատում էր Սուրեն Մինասյանը՝ բարձրահասակ, նիհար, շատ գեղեցիկ տղամարդ, քառասունհինգ տարեկան, չափազանց լուրջ, դրանից ավելի՝ քչախոս, և դրանից էլ ավելի՝ բարեհոգի: Ունենալով աչքի ընկնող համառություն և կամքի ուժ, նա, այնուամենայնիվ, ամեն քայլափոխի զիջումներ էր անում ուրիշներին, իր բարի բնավորությամբ օգնում կամ նույնիսկ ծառայում նրանց:

Մի շատ տգեղ աղջիկ իր ժամանակին ասել էր նրան. «Եվ ամուսնանա՞նք, Սուրեն: Եթե դու էլ չամուսնանաս ինձ հետ՝ էլ ուրիշը չի առնի»: Եվ Սուրենն ամուսնացել էր նրա հետ: Հետո կինն ասել էր. «Ես աղքատ եմ ապրել, Սուրեն, բայց շատ բան չեմ երագել ունենալ՝ երեք զույգ տուֆլի, չորս շոջազգեստ և վեց երեխա»: Եվ Սուրենը, ջանք չխնայելով, մինչև իսկ գիշերներն աշխատելով, նվիրել էր կնոջը ուղիղ երեք զույգ տուֆլի, չորս շոջազգեստ և վեց երեխա: Իսկ հետո կինն ասել էր. «Այժմ մենք լավ ենք ապրում, Սուրեն, եկ այնպես անենք, որ ուրիշներն էլ լավ ապրեն»: Եվ նրանք սկսել էին, — ոչ շարունակել էին, — իրենց կյանքն ի սպաս դնել արհեստանոցներին, դրկիցներին, Էվակուացվածներին, անտուն երեխաներին. . . Հետո կինը հարցրել էր մի օր. «Ես շատ տգեղ եմ, Սուրեն. . . »: «Դու ամենագեղեցիկ կինն ես», —

պատասխանել էր Սուրենը հասարակ ձայնով, բայց հոգու խորքից:

Ցածրիկ հաստոցների վրա իր բարձր հասակով կռանալուց մի քիչ կորացած, ածուխի նման սև բեղիկներով ու աչքերով, նա կատարում էր արհեստանոցի ամենադժվար աշխատանքները, տալիս էր ամենամաքուր և գեղեցիկ արտադրանքը: Նրա աշխատավարձն ամենաբարձրն էր արհեստանոցում, բայց դա ևս մի բան չէր ներկայացնում: Արհեստանոցի արտադրանքը հնարավորություն էր տալիս սահմանել ավելի բարձր աշխատավարձ: Սուրեն Մինասյանը մի քանի անգամ որոշել էր հեռանալ այդտեղից, գնալ ուրիշ աշխատանքի, բայց ամեն անգամ Վարդ-Թորոսյանն աղերսել էր նրան՝ մնալ: Եվ նա իր անձը զոհել էր արհեստանոցին: Բոլոր մյուս բանվորների նկատմամբ հոգատար, բոլորին օգնող, բայց արտաքնապես ինքնամփոփ ու անհաղորդ, նա գլուխն իր հաստոցի վրա խոնարհած, անընդհատ աշխատում էր և կարծես ոչինչ չէր նկատում իր շուրջը: Բայց բավական էր, որ կանգ առնել հաստոցներից մեկը, նա կբարձրացներ գլուխը և լուռ կնայեր այդ կողմ՝ կարիք չկա՞ր իր օգնությանը:

Բոլորը սիրում էին նրան, բայց ամենից ավելի սիրում էր պատանի Վաչագան Թորոսյանը: Դա արդեն երրորդ Թորոսյանն էր արհեստանոցում: Որտեղի՞ց էին հավաքվել ոչ այնքան հաճախակի հանդիպող այդ ազգանունով երեք մարդիկ մի այդպիսի փոքրիկ տեղում...

Վաչագանը, որն արհեստանոցի երրորդ ու վերջին Թորոսյանն էր, տասնհինգ տարեկան մի խելոք տղա էր: Նա սովորել էր Աշխատանքային ռեգերմների արհեստագործական ուսումնարանում և ստացել էր փականագործի մասնագիտություն: Ավարտած պատանիներին գործարանների վրա բաշխելու ժամանակ Վարդ-Թորոսյանին ինչ-որ հրաշքով հաջողվել էր ստանալ Վաչագան Թորոսյանին, որի աշխատանքից ու վարքից բոլորն այժմ գոհ էին: Առավոտյան գալով

աշխատանքի, նա ջերմեռանդությամբ գլուխը կախում էր իր հաստոցի վրա և այլևս չէր բարձրացնում մինչև բանվորական օրվա վերջը, երբ նա հաստոցի վրայից հանում էր մշակված վերջին սկավառակը: Նա ոչ միայն սիրում էր իր աշխատանքը, այլև մեծ պատկառանքով էր վերաբերվում դրան:

Վաչագանը մեծ պատկառանքով էր վերաբերվում նաև դեպի մյուս բանվորները և մասնավորապես դեպի վարպետ Վարդանը և ուստա Առաքելը: Ընդամենը մի ժամանակ նա ինքն էր վազ տալիս մոտակա գաստրոնոմիական խանութը՝ ուտելիք գնելու նրանց համար, նա ինքն էր մոտակա բնակարաններից որևէ մեկի պլիտայի վրա թեյ տաքացնում և բերում: Վաչագանի միանգամայն հակապատկերն էր նրանից երկու-երեք տարով մեծ մի պատանի, որին բոլորը Դատավոր էին անվանում:

Դատավորն աղմկոտ էր, անշրջահայաց, համարյա անքաղաքավարի: Առավոտյան, ներս ընկնելով արհեստանոց և հաճախ մոռանալով նույնիսկ բարևել այնտեղ գտնվողներին, նա իսկույն, բոլորից առաջ, գործի էր գցում իր հաստոցը, մի երկու ժամում շտապ-շտապ կատարում էր իր օրական նորման՝ հարյուր երեսուն կամ հարյուր քառասուն տոկոսով, նայած, թե տարվա ո՞ր եռամսյակն էր դա և քանի տոկոսի գերակատարման պարտավորություն էր վերցրել իր վրա արհեստանոցը, որից հետո աշխատանքային օրվա մնացած մասը նվիրում էր իր հիմնական գործին՝ դատավորությանը:

— Ա՛ճ՛ւտ,— բղավում էր նա լուսամուտից, և բակում ֆուտբոլ խաղացող երեխաներն անվիճելիորեն ընդունում էին այդ «առևտր»: Իսկ եթե որևէ մեկը փորձում էր բողոքել, նա բղավում էր. «Քեզ ասում են՝ «առևտ», ուրեմն՝ «առևտ»: Ի՞նչ անենք, որ գնդակը կպավ փռած վրացքին: Եթե վրացքը չիկներ, հո դո՛ւրս էր գալու դաշտի սահմաններից»:

Ստիպված լինելով չհեռանալ իր աշխատավայրից, Դատավորն ամբողջ օրն այդպես կպած էր լինում լուսամուտին, կարծես ծաղկաման լիներ: Բայց երբեմն, երբ նրա ներկայությունը ֆուտբոլի դաշտում դառնում էր ծայր աստիճան անհրաժեշտ, նա դուրս էր ցատկում լուսամուտից և սլանում դեպի իր իսկական աշխատավայրը: Բայց նրա այդ վերջին արարքը բոլորովին դուր չէր գալիս երկու ծեր բանվորներին, և նրանք սպառնում էին Դատավորին, որ եթե նա մի անգամ էլ դուրս ցատկի՝ այդ մասին կհայտնեն Վարդ-Թորոսյանին: Նրանց հաջողվել էր ազդել Դատավորի վրա, որն այլևս համարյա դուրս չէր ցատկում: Բայց դրա փոխարեն նա ձեռք էր բերել ֆուտբոլի դատավորի իսկական սուլիչ և հարկ եղած բոլոր դեպքերում գործարանում էր այն: Այժմ նա լուրջ կերպով մտածում էր արհեստանոցի աշխատանքը թողնելու և ֆիզկուլտուրայի դպրոց ընդունվելու մասին:

Արհեստանոցի վերջին բանվորը գյուտարար Արամայիսն էր, կոմերիտական հասակի երիտասարդ: Նա ևս սուսիկ-փուսիկ էր՝ Սուրեն Մինասյանի նման, շարունակ իր հաստոցի մոտ էր՝ Վաչագան Թորոսյանի նման, և իսկական բանվոր էր՝ երկու ծերունիների նման: Եթե ուզենար, նա, իհարկե, կարող էր լինել շատ ավելի աշխույժ և աղմկոտ, քան Դատավորը և, ըստ երևույթին, այդպես էլ էր աշխատանքից դուրս: Իսկ արհեստանոցում նա ամբողջովին զբաղված էր իր հաստոցով և բացարձակապես մոռանում էր շրջապատը:

Առավոտյան շտապ մտնելով արհեստանոց, նա ևս, Դատավորի նման, մի երկու ժամում կատարում և գերակատարում էր իր օրական նորման, ապա անցնում էր իր հիմնական գործին՝ գյուտարարությանը: Մի գրպանից հանում էր ինչ-որ փոքրիկ գծագրեր, մյուս գրպանից՝ փոքրիկ կիսամշակվածքներ, որոնք, ամրացնելով հաստոցի վրա, սկսում էր տաշել: Երբեմն հարկ էր լինում ծակել դրանք, և նա այդպիսի դեպքերում օգտվում էր Մինասյանի հաստոցից, որի վրա վերջինս

անցքեր էր բաց անում սկավառակների վրա՝ տոտիկների համար:

Որպես հմուտ, բարձրորակ բանվոր, Արամայիսը, իհարկե, կարող էր աշխատել լավագույն արհեստանոցներում կամ գործարաններում, ստանալ շատ ավելի աշխատավարձ: Նա հենց այդպես էլ որոշել էր անել երբևէ, բայց առայժմ մտում էր «Կենցաղային սկավառակների» արհեստանոցում, որովհետև նրան անհրաժեշտ էր ազատ հաստոց, որի վրա նա կարողանար մշակել իր գյուտի դետալները:

Արհեստանոցի վերջին՝ յոթերորդ հաստոցը համարյա ամբողջ ժամանակ մնում էր առանց տիրոջ: Չնայած Վարդ-Թորոսյանի բոլոր ջանքերին, նրան չէր հաջողվում գտնել ևս մի՛ յոթերորդ միամիտի, որն ուզե՞նար աշխատել այն արհեստանոցում, որի ղեկավարն էր ընկեր Վարդ-Թորոսյանը:

Ճիշտ է, երբեմն նրան հաջողվում էր գտնել այդպիսիին, բայց մի օր հետո, ամենաշատը՝ երկու օր հետո, հաջողվում էր ավելի հեշտ կերպով կորցնել նրան: Համտես անելով արհեստանոցի աշխատանքը, յոթերորդ հաստոցի հերթական տերը թողնում էր և հեռանում:

Որպեսզի հաստոցն, այնուամենայնիվ, չմնա պարապ կանգնած, Վարդ-Թորոսյանն իրեն վստահված արհեստանոցում ծավալել էր տվել բազմահաստոցայնության շարժում, այսինքն՝ բոլորին զիջող և ամեն ինչում ընդառաջող Սուրեն Մինասյանին աշխատացնել էր տվել նաև այդ հաստոցի վրա:

— Բարև ձեզ,— գվարթ ձայն տվեց նոր բանվորը շեմքի վրայից:

Բանվորները բարձրացրին գլուխները և ողջունեցին: Դատավորը շուռ եկավ՝ սուլիչը բերանին, և արձակեց ողջույնի սուլոց:

— Որտե՞ր է այստեղ իմ հաստոցը:

— Ահա,— ցույց տվեց Սուրեն Մինասյանը:

— Ա՛, ճանաչեցի, ճանաչեցի վարիչի կաբինետում խփված լուսանկարից,— ժպտաց Գարեգինը:— Բազմահաստոցային: Դե, ի՞նչ արած, եղբայր, վերածվիր միհաստոցայինի: Այդպե՛ս:

— Այդպես:

— Բայց այդպես ոչ մի տեղ չի լինում: Դուրս է գալիս, որ ձեզ մոտ ամեն ինչ հակառակն է: Այդպե՛ս:

— Աշխատիր, աշխատիր,— խրատականորեն և նույնիսկ մի քիչ բարկացած, ասաց

ծերունիներից մեկը:— Թե չե՛ սկսեց հարցուփորձը:

— Դու, հայրիկ, մի՛ բարկանա ինձ վրա,— ժպիտով դիմեց Գարեգինը նրան:— Ես անհասկացող մարդ եմ: Ինչո՛ւ ընդունեն նոր բանվոր, երբ առանց նրա էլ հաստոցներն աշխատում են:

— Յոթերորդ բանվորը շտատով է նախատեսված,— բացատրեց մյուս ծերունին:— Թե չե՛ ի՞նչ դուրս կգա: Եթե մեզանից ամեն մեկն աշխատի երկու հաստոցի վրա, ուրեմն արհեստանոցում կլինեն ընդամենը երեք-չորս բանվորներ, իսկ գրասենյակում՝ հինգ ծառայող: Չի կարելի: Դա կլինի վերադիր ծախսերի ուռճացում: Բանվորները պիտի ավելի լինեն:

— Դու, ինչ է, ծիծաղո՞ւմ ես, հորեղբայր,— հարցրեց Գարեգինը՝ մոտենալով իր հաստոցին:

— Ինչպես ուզում ես՝ Էնպես էլ հասկացիր, ծիծաղո՞ւմ եմ, թե լալիս:

— Իսկ ես ոչ մի կերպ չեմ հասկանում, հորեղբայր:

— Աշխատիր, աշխատիր, կհասկանաս:

— Անկյունային հարված,— լսվեց Դատավորի բացականչությունը:

— Է՛յ, տղա,— բղավեց Գարեգինը նրա վրա,— դո՛ւ ինչու չես աշխատում:

Դատավորը շուռ եկավ, զարմացած նայեց նոր բանվորին, ոչինչ չպատասխանեց և շարունակեց իր դատավորությունը:

— Նա իր նորման արդեն կատարել է հարյուր երեսուն տոկոսով,— բացատրեց Վաչագան Թորոսյանը՝ ցանկանալով մտերմանալ նոր բանվորի հետ:

— Դե, ի՞նչ, եթե նա այդպիսի հերոսն է, ուրեմն թող կատարի Էլի այդքան: Օրվա կեսը դեռ առջևումն է:

— Չի կարելի,— միջամտեց «հայրիկ» ծերունին:

— Չի թույլատրվում, — ավելացրեց «հորեղբայր» ծերունին:

— Այդ ինչպե՛ս...

— Հենց այնպես: Չի թույլատրվում:

— Ի՞նչ եք դուրս տալիս,— լուրջ բարկացավ Գարեգինը:

— Հումքը քիչ է,— հանգիստ բացատրեց Արամայիսը,— հարկավոր է այնպես ծախսել, որ բավականացնի:

— Իսկ իմ ի՞նչ գործն է, թե քիչ է: Թող ավելի շատ ստանան:

— Չկա: Ասենք՝ պետք էլ չէ: Ո՛ւմն է հարկավոր եղածից ավելի արտադրանք, ո՛վ կգնի:

— Այդ դեպքում հարկավոր է կրճատել բանվորների թիվը,— եզրակացրեց Գարեգինը:

— Չի կարելի,— միջամտեց «հորեղբայր» ծերունին:

— Չի թույլատրվում, — ավելացրեց «հայրիկ» ծերունին:

— Սա ի՞նչ հիմար բան է,— հայհոյեց նոր բանվորը:— Դուք ինքներդ անելու բան չունեք, իսկ ե՛ս ինչ պիտի անեմ այստեղ...

Սուրեն Մինասյանը, որ չէր մասնակցում խոսակցությանը, և կարծես նույնիսկ չէր լսում, անմիջապես ընդառաջեց նրան՝ բացատրելու համար նրա անելիքը:

— Ահա: Վերցրու այս սկավառակները սենյակի աջ անկյունից, մշակիր հաստոցի վրա և դիր ձախ անկյունը:

Գարեգինն աջ անկյունից վերցրեց մի սկավառակ, գննեց:

— Իսկ ի՞նչ է հարկավոր անել սրան:

— Հարկավոր է տալ սկավառակի ձև:

— Ախր սա հենց սկավառակ է, որ կա:

— Ավելի լավ: Նշանակում է՝ շատ պտտեցնելու կարիք չկա:

Պտտեցնելու կարիք բոլորովին չկա:

— Էլ ավելի լավ: Բայց դու պտտեցրու, պտտեցրու: Գուցե որևէ անհարթություն կունենա, անողորկություն:

— Ոչինչ չունի, շատ լավ սկավառակ է:

— Պտտեցրու, պտտեցրու, — նշանակալից տոնով նորից խորհուրդ տվեց Սուրեն Մինասյանը: Գարեգինն ապշած նայեց նրան, ապա մյուսներին: Բայց ոչ ոք չէր նայում նոր բանվորին, ոչ ոք, ըստ երևույթին, չէր ցանկանում շարունակել խոսակցությունը: Բոլորը, չգիտես ինչու, շփոթված էին և անհարմար դրության մեջ՝ բացի Դատավորից, որը շարունակում էր իր դատավորությունը: Հայացքը հաճելով բոլորի վրայով, Գարեգինը հանկարծ բռնկվեց.

— Ախ այդպե՛ս: Ուրեմն պտտեցնե՛մ: Շահ տ լավ: Այնպե՛ս պտտեցնեմ ձեզ համար և մանավանդ ձեր Վարդ-Թորոսյանի համար, որ...

— Տասնմեկստորանց հարված, — բղավեց Դատավորը լուսամուտից դուրս և սուլեց:

## 9

Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր գործարանի կամ արհեստանոցի աշխատանքն ու բարեկեցությունը կախված է նրա հումքից: Եթե հումք չկա՝ չկա նաև գործարան կամ արհեստանոց:

«Կենցաղային սկավառակների» արհեստանոցն աշխատում էր համարյա բացառապես մեքենայական գործարանի բազայի վրա: Մյուս գործարաններից ստացվող հումքը կրում էր պատահական բնույթ և չէր կազմում քիչ թե շատ զգալի քանակ:

Մեքենայական գործարանում զանազան դետալներ շտամպելուց կամ այլ կերպ պատրաստելուց հետո մտնում էին բավական մեծ քանակությամբ սկավառակաձև կտորտանքներ: Ամիսը մի կամ երկու անգամ Սիրական Համբարձումյանը գնում էր այնտեղ, գործարանի բակում դիզված մնացուկների միջից ջոկում առանձնացնում էր այդ կտորտանքը և փոխադրում արհեստանոց: Երբեմն դրանք շատ էին լինում, երբեմն՝ քիչ: Եվ որպեսզի արհեստանոցում տեղի չունենային արտադրական տեղատվություններ, Վարդ-Թորոսյանը խստիվ հսկում էր, որ այնտեղ չլինեին նաև մակընթացություններ: Ոչ մի բանվորի թույլ չէր տրվում իր օրական նորման կատարել ստանձնած պարտավորությունից թելուզ մի տոկոս ավելի, որպեսզի հաջորդ օրը կամ շաբաթը նա չմտար առանց հումքի:

Բերելով սկավառակաձև կտորտանքն արհեստանոց, Սիրական Համբարձումյանն ամենից առաջ հոգում էր այն մասին, որ դրանք չխառնվեն արդեն պատրաստ արտադրանքի հետ: Այնքան նման էին դրանք իրար, որ հետո հնարավոր չէր լինի զանազանել:

Մի անգամ նույնիսկ պատահել էր այսպիսի մի դեպք: Սիրականը գնացել էր Միավորում, իսկ «Հայառի» մի խանութին հարկավոր էր ուղարկել սկավառակներ, եկել էր նրանց մեքենան, սպասում էր:

Վարդ-Թորոսյանը կանչեց քարտուղարուհուն և ասաց.

— Մարգարյան, հաշվեցեք արհեստանոցի աջ անկյունում դիզված արտադրանքը և հանձնեցեք այս ընկերոջը: Վերցրեք ստորագրություն: Արհեստանոցի վարիչը, սխալմամբ, փոխանակ ասելով՝ «ձախ», ասել էր «աջ» անկյուն, որտեղ դրված էր ոչ թե արտադրանքը, այլ հումքը:

Ոչ Աստղիկը, ոչ խանութի վարիչը չէին նկատել այդ: Իսկ բանվորները, չհասկանալով, թե ինչու համար են հումքից զրկում իրենց, այնուամենայնիվ, չէին միջամտել:

Ամենահետաքրքիրն այն է, որ տարբերությունը չէին նկատել նաև սպառողները և շարունակել էին «հագե՛նալ» այդ սկավառակներով: Միայն տոտիկներ էին պակասում դրանց, բայց սպառողների մեծամասնությանը հարկավոր էին հենց «անտոտիկ» սկավառակներ՝ սառը առարկաների տակը կամ վրան դնելու համար:

Միայն Սիրական Համբարձումյանը, վերադառնալով արհեստանոց, նկատեց սխալը և տվեց իր գլխին: Նետվելով կաբինետ, նա վարիչին հայտնեց պատահածի մասին: Արհեստանոցը զրկվել էր առնվազն տասն օրվա հումքից, իսկ մեխանիկական գործարանի բակում դեռ չէին կուտակվել նոր մնացուկներ. . .

Առանց շփոթվելու, սառնարյուն կերպով, ինչպես դա վայել է արտադրական ձեռնարկության պետին, Վարդ-Թորոսյանը կարգադրեց. — որպեսզի հաստոցները կանգ չառնեն, արհեստանոցում կուտակված արտադրանքը համարել հուճք և Նորից մշակել հաստոցների վրա: Իսկ մշակել՝ նշանակում էր ամրացնել սկավառակը հաստոցի թամբի վրա, պատեցնել մի քանի անգամ և հանել: Կտրիչն այդպիսի դեպքերում կարող էր լինել հաստոցի վրա, կարող էր լինել նաև թարեքի վրա:

## 10

Վարդ-Թորոսյանն իրավունք ուներ գոհ լինելու թե՛ իր արհեստանոցից և թե՛ իրենից: Եվ նա գոհ էր: Նրա դեմքի վրա շարունակ գտնվում էր իր գործերը լավ կարգի գցած մարդու ինքնագոհ արտահայտություն: Եվ եթե չլիներ արհեստանոցի փոքրության պատճառած վիշտը, ապա Վարդ-Թորոսյանին կարելի էր համարել միանգամայն երջանիկ մարդ:

Իհարկե, դա չէր նշանակում, թե նա չէր ունենում նաև դառնության ժամեր. . . Ճիշտ է, դրանք լինում էին ուշ-ուշ, մի ամիսը կամ երկու ամիսը մեկ, բայց և այնպես այնքան տհաճ ժամեր էին, որ դրանցից հետո դեռ երկար ժամանակ նրա տրամադրությունը մնում էր ընկած:

Դրանք այն օրերն էին, երբ Միավորումից նրա արհեստանոցն էին գալիս երկու երիտասարդներ՝ տեխնիկական հսկիչներ՝ հաստոցների վիճակն ստուգելու համար:

Այսօր, երբ Վարդ-Թորոսյանն այնքան գոհ էր, որ անսպասելիորեն բանվոր էր ճարվել յոթերորդ հաստոցի համար, երբ այնքան լավ էր նրա տրամադրությունը, հակառակի պես Նորից եկան վերահսկիչները:

Մտնելով արհեստանոց և Նորից տեսնելով անդրջրիեղեյան հաստոցները, որոնք վաղուց արդեն քաշում էին ուտիլիտիոյի բակերի կարոտը, երկու երիտասարդները նայեցին իրար և, ինչպես յուրաքանչյուր անգամ, քրքջացին այնքան բարձր, որ Վարդ-Թորոսյանը դա լսեց իր կաբինետում: «Եկան. . .», — մտածեց նա՝ անտանելի անախորժության զգացումով, և մի քանի անգամ շուռումուռ գալով իր աթոռի վրա, ստիպեց իրեն հանգստանալ և շարունակել դիրք պահելը:

Բայց նրա հանգստությունը երկար չուներ: Հսկիչներից մեկը, հաստոցներից մեկի մոտ պագած, կանչեց մի այլ հաստոցի մոտ զբաղված իր ընկերոջը և լուռ ցույց տվեց իր զննած հաստոցի ինչ-որ մասը: Ընկերոջ ծիծաղը պայթեց ռումբի պես՝ այս անգամ վարակելով նաև արհեստանոցի բանվորներին: Չէ՞ որ նրանք ևս գիտեին իրենց հաստոցների ծիծաղելի հնամենիությունը, բոլոր տխուր և միաժամանակ ծիծաղաշարժ թերությունները:

Լսելով ընդհանուր ծիծաղը, Վարդ-Թորոսյանն այլևս չկարողացավ հանգիստ մնալ իր կաբինետում: Նետվելով ընդհանուր բաժին և այնտեղից արհեստանոց, նա ասաց խստությամբ.

— Կամաց: Խանգարում եք աշխատել:

Նա նույնիսկ մոռացավ, որ դա պետք էր ասել քարտուղարուհու միջոցով:

Վերադառնալով կաբինետ, Վարդ-Թորոսյանը բռունցքները դրեց սեղանին և ճակատը հենեց բռունցքներին: Այդ ընթացքում նրա դեկավարած արհեստանոցը կորցրեց նրա աչքում ամեն մի հեղինակություն, զրկվեց որևէ լրջությունից, և նրան թվաց, թե դա խաղալիք է, իսկ նրանք՝ տասնմեկ լուրջ մարդիկ, երեխաներ են, ավելի ճիշտ՝ ընկել են երեխայի վիճակի մեջ: Մինչդեռ ամբողջ երկիրն զբաղված է լուրջ աշխատանքով, իսկական արտադրությամբ, յուրաքանչյուրն ունի իր խտացած աշխատանքային օրը, իր բովանդակալից կյանքը, նրանք արհեստանոցում զբաղված են իզուր ժամավաճառությամբ, իրենց թանկագին էներգիան ծախսելով անարտադրական գործի, ջարդելու արժանի հաստոցների վրա. . .

Դժվար էր ասել, թե ի՞նչ կուզենար նա այդպիսի ընթացքներին. . . ա՛յն, որ հսկիչներն այս անգամ էլ թույլ տային շարունակելու բանեցնել այդ հաստոցները, թե՛ գտնելով դրանց վրա աշխատելն արդեն վտանգավոր, արգելելն այն:

Արգելում, այնուամենայնիվ, այս անգամ էլ տեղի չունեցավ: Ավարտելով ստուգումը, հսկիչները թակեցին վարիչի կաշվեպատ դռան երկաթե բռնակը պտուտակի բանալիով, մտան ներս և ասացին.

— Զեչեք: Դեռ կարելի է:

## 11

Օրվա երկրորդ կեսին եկավ կես-դրույք մեքենագրուհի Էլեոնորա Նորադուզեցյանը՝ տգեղ բերանով: Նա լուռ էր:

— Ի՞նչ է պատահել, Էյա,— անհանգստացավ Աստղիկը՝ տեսնելով նրան այդպիսի արտակարգ վիճակում: Էլեոնորայի բերանը շարունակում էր մնալ տգեղ:

— Էլի Արդարյա՛նն է մեղավոր,— եկթադրեց Աստղիկը:

— Բա էլ ո՞վ,— հանկարծ պայթեց Էլեոնորան: Նրա բերանն իսկույն դարձավ գեղեցիկ և այլևս չտգեղացավ մինչև աշխատանքային օրվա վերջը:

Աստղիկ Մարգարյանն այնուամենայնիվ հնարավորություն գտավ նրա խոսելու ընթացքում հայտնել օրվա Նորությունը Արիստակես Թորոսյանի մասին: Շարունակելով խոսելը, միայն թե

ընթացքի մեջ խոսակցության կյուրը փոխելով շնորհավորանքի, Էլեոնորան մոտեցավ հաշվապահին և անկեղծ ու ջերմորեն ողջունեց նրան: ՉԷ՞ որ Թորոսյանն իր այդ նորությամբ պատմելու այնքան կյուր էր տալիս Էլեոնորա Նորադուզեցյանին: Վաղը նրա մասին մյուս արհեստանոցում կիմանան բոլորը. . .

Այնուհետև, նստելով գրամեքենայի ետևը և մեքենայի վրա ամրացնելով «շտապ» գրությունը, նա շարունակեց մի քանի ամիս առաջ սկսած նախադասությունը. «Խստիվ արգելվում է աշխատանքային օրվա ընթացքում զբաղվել կողմնակի. . .»: Հասնելով «կողմնակի» բառին, նա նորից մի օրով ընդհատեց աշխատանքը և շարունակեց չկնոցը, իհարկե, ոչ գրամեքենայինը: Ուրիշ հնչյուններ բացի դրանից, չկային գրասենյակում: Իր գրասեղանի ետևում լուռ նստած, վաղվա օրվա մասին էր երազում հաշվապահ Թորոսյանը: Կաբինետում բանտարկյալի պես նստած, դիրք էր պահում Վարդ-Թորոսյանը: Բուն արհեստանոցում անձայն ընթանում էր աշխատանքը: Բակում, ճիշտ է, աղմուկ-աղաղակով ֆուտբոլ էին խաղում երեխաները, բայց նրանց աղմուկն այնքան սովորական էր դարձել բոլորի լսողության համար, որ բոլորն այն ընկալում էին որպես լուռություն: Երբեմն-երբեմն լսվում էին նաև Դատավորի սուլիչի ձայնը և «աուտ», «կոռներ», «ձեռք», «տուգանք» բացականչությունները: Երկու անգամ լսվեց կոտրվող ապակու ձայն:

Ամեն ինչ սովորական էր:

Գրասենյակի դեպի նրբանցք նայող լուսամուտները հանկարծ գնգզնագցին: Նրբանցք մտավ մի ծանր կատոկ և սկսեց դանդաղ շարժվել առաջ: Դեռ նոր էր նա անցել լուսամուտների մոտով, երբ նրբանցքը հանկարծ բռնվեց այնպիսի մի փոշիով, որ այլևս չերևաց ոչ մի ոտք: Աստղիկն շտապեց դեպի լուսամուտ՝ օդանցքը փակելու: Փոշու ամպի միջով անցավ մի բեռնատար մեքենա, և Աստղիկն օդանցքը փակելուց առաջ զգաց բեռնատարի վրա կուտակված տաք ասֆալտի բնորոշ, բարեկարգ քաղաքների և մեծ փողոցների վարժված մարդու համար դուրեկան և խոստումնալի հոտը. . .

## 12

Աշխատանքը վերջանալուց հինգ րոպե առաջ, ավարտելով իր գործերը քաղաքի զանազան հիմնարկներում, Սիրական Համբարձումյանը վերադարձավ գրասենյակ: Դնելով ինչ-որ փաստաթղթեր գրասեղանի դարակը և այն փակելով, նա շտապեց բանվորների մոտ՝ օրվա աշխատանքն ընդունելու: Բայց նա դեռ նոր էր մտել արհեստանոց, երբ ֆուտբոլի գնդակի պես դուրս թռավ այնտեղից և ոտքի վրա կիսաշրջան կատարելով, վարիչի կաշվեպատ դռնից ընկավ ներս: Ընկավ ներս և գոռաց շեմքի վրայից.

— Հասի՛ր, Ավետիք, նոր բանվորն իր նորման կատարեց ուլթ հազար տոկոսով...

— Ի՛նչ...— ճչաց վարիչը՝ սարսափելի զուհասովելով, և վեր ցատկեց տեղից: Մոռանալով դիրք, հեղինակություն, նա մի ուստյունով հասավ կաշվեպատ դռանը, մյուս ուստյունով՝ արհեստանոցի դռանը, և երրորդ ուստյունով՝ Գարեգին Սարոյանի հաստոցին:

— Ի՛նչ ես ասում, ի՛նչ ես անում,— որոտաց նա և խլեց նրա ձեռքից վերջին սկավառակը, որ Գարեգինն ուզում էր ամրացնել հաստոցի թամբի վրա:

Բանվորներից ոմանք ցավակցությամբ, ոմանք թաքցրած ժպիտով և ոմանք էլ տարակուսանքով նայեցին նրան: Գարեգինն ինքը նայում էր միանգամայն հանգիստ և անտարբեր:

Վարիչի աչքն ընկավ մշակված սկավառակների ահագին կույտին՝ հաստոցի աջ կողմում:

— Օ՛յ,— բացականչեց նա՝ դեմքը ցավից ծամաձռելով:

Նույն պահին նրա աչքն ընկավ նույնպիսի մի կույտի վրա՝ հաստոցի ձախ կողմում:

— Օ՛յ, օ՛յ,— կրկնեց նա՝ ավելի ուժգին:

Բայց հաստոցի առջև դիզված էր նաև մի երրորդ կույտ: Սարսափահար Վարդ-Թորոսյանը հայացքը դարձրեց դեպի այդ՝ չհասկանալով դրա ի՛նչ լինելը: Վերցրեց այդտեղից մի սկավառակ, նայեց և շարունակելով չհասկանալ, հարցրեց բանվորներին.

— Սա հո՛ւմք է, թե արտադրանք:

— Արտադրանք,— պատասխանեց Դատավորը:

— Օ՛յ, օ՛յ, օ՛յ,— երրորդ անգամ հեծեծաց վարիչը և հարձակվեց Գարեգինի վրա:— Այս ի՛նչ ես արել, անգուլթ, քանդել ես մեր տունը: Արհեստանոցը երկու շաբաթով թողեցիր առանց հուճկի: Էզոխստ, չես մտածում ընկերներիդ մասին, խլում ես նրանց հացը:

Բանվորները վարիչի ու նոր բանվորի շուրջը հավաքված, լուռ նայում էին նրանց: Արհեստանոցի դռան մոտ կուտակվել էին գրասենյակի բոլոր աշխատակիցները:

— Ընկեր Վարդ-Թորոսյան,— արդարացավ Գարեգինը,— ես ուզեցի ապացուցել, որ մեր արհեստանոցն ունի բոլոր օբյեկտիվ հնարավորությունները՝ չտեսնված չափով բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը: Պարտավորություն եմ վերցնում ինձ վրա վաղն իմ նորման կատարել քսան հազար տոկոսով, իսկ հաջորդ ամսին աշխատել քսանմեկերորդ դարի հաշվին: Միայն թե հուճկ հասցրեք. . .

Վարդ-Թորոսյանը չհասկացավ, թե ինչ կատարվեց իր հետ: Մի վայրկյանում, զուգահեռաբար, նրա մեջ շարժվեցին մոտ մի տասնյակ զգացմունքներ, որոնք փոխադարձաբար խանգարելով իրար, Վարդ-Թորոսյանին դրեցին բավական հիմար վիճակի մեջ՝ թույլ չտալով գտնել իր անելիքը: Բայց վերջապես նայելով շուրջը և բղավելով՝ «շաբաշ, ցովեցե՛ք», նա դիմեց Գարեգին Սարոյանին.

— Գնանք կաբինետ, ես առանձին խոսակցություն ունեմ ձեզ հետ. . .

Երբ նրանք մտան կաբինետ, վարիչն իսկույն անցավ իր գրասենյակի ետևը, նստեց, գլուխն առավ ձեռքերի մեջ, մտածեց մի պահ և ապա իր մտքերն արտահայտեց բարձր ձայնով.

— Ինչո՞ւ ընդունեցի ես սրան. . . Այն էլ՝ առանց փորձնական ժամկետի. . . Չէ՞ որ հենց առաջին րոպեին զգացի, որ սա կյառուզնիկ է. . .

Գարեգինը լուռ նայեց նրան:

— Այո, այո, կյառուզնիկ,— բռունցքն ուժեղ խփելով սեղանին, իր խոսքը հաստատեց Վարդ-Թորոսյանը:— Դուք ուզում էիք վարկաբեկել մեր արհեստանոցը և հասաք ձեր նպատակին:

— Վարկաբեկե՞լ. . .

— Չե՞ք հասկանում: Շատ լավ եք հասկանում: Դուք ուզում եք ինչ-որ ռեկորդներ սահմանել, անձնական հոչակ ստեղծել ձեզ համար, իսկ մյուս կողմից՝ ապացուցել, որ մեզ մոտ նորմաները խիստ իջեցված են, խիստ ցածր են օբյեկտիվ հնարավորություններից: Այդպե՛ս:

— Ընկեր Վարդ-Թորոսյան, դուք սխալվում եք,— ամենայն հեզությամբ արդարացավ Գարեգինը,— ես պարզապես չնկատեցի, թե ինչպես այդքան գերակատարեցի իմ նորման: Ես մեղավոր չեմ:

Կային կիսամշակվածքներ, որոնք նույնիսկ կարիք չունեին հաստոցի վրա ամրացվելու: Դրանք արդեն պատրաստի արտադրանք էին: Ճիշտն ասած, կիսամշակվածքների մեծ մասն այդպես էր:

— Եվ դուք ի՞նչ էիք անում. . . — համարյա հասկանալով և իր ենթադրության հաստատումը լսելուց վախենալով, հարցրեց Վարդ-Թորոսյանը՝ տեղից վեր կացած:

— Այո, այո, դուք ճիշտ եք ենթադրում: Ես վերցնում էի այդպիսիները, նայում էի և առանց հաստոցի վրա ամրացնելու, մոցնում էի իմ կատարած նորմայի մեջ. . .

Խե՛ղճ, խե՛ղճ գրասենյակ. . . Բռունցքի մի նոր և այնպիսի ուժգին հարված իջավ նրա վրա, որ թանաքի շիթը դուրս ցայտելով թանաքամանից, ընկավ թղթերի վրա և հոսելով շեղակի, դրեց դրանց վրա ամենախիտացի մակագրությունը բոլոր հնարավորներից:

— Կեղծարար,— կոկորդով մեկ գոռաց Վարդ-Թորոսյանը:— Խաբեբա՛... Ահա թե ինչպե՛ս եք կատարել դուք ձեր նորման: Դուք ոչ մի տոկոս էլ չեք կատարել: Վաղը ես ձեր ամբողջ արտադրանքը կհայտարարեմ հումք և կտամ բանվորներին մշակելու: Տեսնո՞ւմ եք ի՞նչ վնաս է: Ութ հազար տոկո՛ս. . . Ազատ եք: Ազատ եք՝ ընդհանրապես: Վաղվանից կարող եք չգալ աշխատանքի:

Գարեգին Սարոյանի մշտապես խիստ արտահայտություն ունեցող դեմքը մեղմացել էր ներքին ծիծաղից: Նրա աչքերը փայլում էին գվարթ: Վարդ-Թորոսյանը տարակուսանքով նայեց նրան: Եվ վարիչի աչքի առաջ այդ դեմքը միանգամից նորից ստացավ իր նախկին խիստ արտահայտությունը: Բայց ոչ, նա ստացավ ավելի խիստ, համարյա հրամայական արտահայտություն, և նա ասաց ծանրակշիռ հանգստությամբ.

— Վարիչի խոսակցությունը բանվորի հետ՝ վերջացավ: Իսկ այժմ, Վարդ-Թորոսյան, եկ խոսենք՝ ինչպես խորհրդային քաղաքացին խորհրդային քաղաքացու հետ: Այս ի՞նչ օյինբազություն է քո արհեստանոցում: Դու վարի՞չ ես, թե՞ ֆոկուսնիկ. . .

— Ընկեր, ընկեր. . . — սպառնական բղավեց վարիչը՝ նորից ցատկելով ոտքի:

— Նստի՛ր տեղդ, Վարդ-Թորոսյան, հիմա ես եմ խոսում: Այս ի՞նչ կեղծարարություն է քեզ մոտ: Պատասխանիր. . .

### 13

Էլենոսրա Նորադուզեցյանն այդ գիշերը չէր քնելու, դա սկզբից էր հայտնի: Դեռ երեկոյից նա տանջվում էր, թե ե՞րբ պիտի գա առավոտը, որպեսզի նա սլանա արհեստանոց, հետևի դեպքերի զարգացմանը և օրվա երկրորդ կեսում պատմի այդ մասին մյուս արհեստանոցի գրասենյակում: Էլենոսրան սովոր չէր այդպիսի արտակարգ նորությունների և այժմ ուղղակի ֆիզիկապես տանջվում էր դրանից: Ուստի և, որոշ չափով թեթևանալու համար նա հերթով անցավ իր ապրած հարկի, դրա ներքևի հարկի և դրա վերևի հարկի հարևանների մոտ, բոլորին պատմեց եղելությունը: Բայց որքան շատ էր պատմում, այնքան ավելի էր ուժեղանում նրա պատմելու պահանջը:

Երբ բոլոր հարևանները քնեցին և նա մենակ մնաց իր սենյակում, նա առաջին անգամ իր ապահարզանից հետո զգաց իր մենակությունը և լաց եղավ, թե ինչո՞ւ է այդքան դժբախտ, չունի ամուսին, որին կարողանար պատմել մինչև առավոտ. . .

Իր ամուսնուն պատմելու հնարավորություն ուներ Աստղիկ Մարգարյանը: Եվ նա պատմեց: Բայց պատմեց գայրույթով, համարյա արտասովոր վիրավորանքից: Գարեգինի կատարած ութ հազար տոկոսները միանգամայն բաց էին արել նրա աչքերը: Այժմ նա տեսնում էր, որ «Կենցաղային

սկավառակների» գործարանային տիպի արհեստանոցում բոլորը, սկսած վարիչից և ավարտած նրանով, ամբողջ ժամանակ զբաղված են եղել դատարկ ժամավաճառությամբ: Մեկը՝ գիտակցաբար, մյուսը՝ անգիտակցաբար, երրորդը՝ խաբելով ինքնիրեն, բայց բոլորն էլ զբաղվել էին ջուր ծեծելով: Տասնմեկ լուրջ մարդիկ, այդ թվում նաև Աստղիկն ինքը, օրեր, շաբաթներ, ամիսներ շարունակ կորցրել էին իրենց ոսկե ժամանակը՝ ամենաթանկագին գանձը. . .

Վիրավորանքը խեղդում էր նրան: Նա գիտակցում էր, որ ոչ մի օրենք չի կարող վերադարձնել նրան այն գանձը, որ հափշտակել էր նրանից Վարդ-Թորոսյանը: Բայց նա ավելի շատ զայրացած էր իր վրա, որ թույլ էր տվել այդպես կողոպտել իրեն. . .

Ամուսինն սկսեց հանգստացնել նրան, միխթարել և մանավանդ համբուրել: Աստղիկն աստիճանաբար հանգստացավ և դատելով ավելի սառը, գտավ, որ, ճիշտ է, նրան կողոպտել են, բայց ինքն էլ պակաս չի մնացել, ետ է խլել Վարդ-Թորոսյանից իր ժամանակի զգալի մասը: Նրա գրասեղանի կիսաբաց դարակի միջով անցել են ամբողջ գրադարաններ: Իսկ այժմ նա արդեն հեռակա ուսանողուհի է: Կավարտի և կքավի իր հանցանքը ժողովրդի հանդեպ: Այո, հանցանքը: Բոլորովին խաղաղված, նա, վերջապես քնեց:

Ոչ էլեռնորայի նման անքուն մնաց և ոչ էլ Աստղիկի պես քնեց Սիրական Յամբարձումյանը: Նա սուտ քուն ձևացավ:

Գայով տուն, նա հագիվ մի կտոր բան կերավ և պառկեց բազմոցի վրա՝ հայտնելով կնոջն ու բազմանդամ ընտանիքի մյուս անդամներին, որ վատ է զգում իրեն: Բայց բոլորը և առաջին հերթին կինը նկատեցին, որ նա ոչ թե հիվանդ է, այլ շփոթված: Կինն այդ բանն իսկույն մտքում կապեց արհեստանոցի գրասենյակի քարտուղարուհի Աստղիկի հետ և խանդից տանջվելով, սկսեց անել մեկը մյուսից սարսափելի ենթադրություններ:

Աչքերը փակած պառկել էր Սիրական Յամբարձումյանը և մտածում էր: Նա վաղուց գիտեր, որ «Կենցաղային սկավառակների» արտադրությունն աչքակապություն է և ուրիշ ոչինչ: Բայց նա՝ ազնիվ գավակների, հարսների և փեսաների տեր, ինքը նույնպես ոչ անազնիվ մարդ, չէր վրդովվել դրանից, որովհետև, նրա կարծիքով, այդ աչքակապությունից ոչ ոք չէր տուժում: Ընդհակառակը, դրանից օգտվում էին տասնմեկ մարդ: Միևնույնն է, սկավառակաձև այդ հումքը պիտի անպետք ընկած մնար գործարանների բակերում, մինչև որ գևար ուտիլսիրոյի բակերը: Ինչո՞ւ չհավաքել դրանք, չմշակել, թեկուզ հենց ձևացնել, թե մշակել, և այդպիսով աշխատանք չտալ տասնմեկ մարդու. . . Մանավանդ որ, սկավառակներն անպետք իրեր չեն և գնվում են բնակչության կողմից. . .

Այժմ, Գարեգինի կատարած ութ հազար տոկոսից հետո, նա հասկանում էր, որ սկանդալ էր լինելու և ամենից առաջ խայտառակվելու էր ինքը՝ Սիրական Յամբարձումյանը:

Ոչ, նրա մտքերի մեջ տեղի չէր ունեցել ոչ մի բեկում, նա շարունակում էր լավ կարծիք ունենալ «Կենցաղային սկավառակների» արտադրության մասին, բայց գիտեր, որ արհեստանոցի խաղաղ կյանքին եկել է վախճան: Եվ նա, ափսոսալով դրա համար, վախենում էր նույնիսկ մտածել, թե ի՞նչ էր կատարվելու վաղն արհեստանոցի հետ՝ ընդհանրապես, և իր հետ՝ մասնավորապես:

Ամենից ավելի հանգիստ վիճակումն էր Արիստակես Թորոսյանը: Յաշվապահական իր ողջ կյանքում գործ ունեցած լինելով խոշոր գործարանների և տրեստների հետ, նա միշտ էլ որոշ արհամարհանքով էր վերաբերվել մանր արհեստանոցներին: Նա համոզված էր, որ արհեստանոցներն ընդհանրապես ավելորդ բաներ են, անցյալի հետամնացության հետքեր, և մոտ ապագայում վերանալու են՝ տեղի տալով նոր գործարանների:

Այդ օրվա դեպքը նրան բոլորովին չէր զարմացրել: Նա դա համարում էր մի նոր ապացույց արհեստանոցների ավելորդության:

Որ արհեստանոցում տեղի էր ունեցել աչքակապություն՝ նա այդ չգիտեր, որովհետև ոչ մի անգամ ոտքը ներս չէր դրել բուն արհեստանոցի դռնից, չգիտեր, թե ի՞նչ է արտադրվում այնտեղ և ինչպես: Ընդհատ է, մի քանի անգամ օգնել էր բանվորներին՝ ներս կրելու հումքը, բայց այդ ժամանակ նա մտածել էր միայն իր գրասեղանի և դրա վրա կիսատ թողած գործի մասին՝ շտապելով վերադառնալ դեպի այն:

Արիստակեսի խիղճը մաքուր էր: Ոչնչով չպղտորված ուրախությամբ նա տնեցիներին հաղորդեց նոր և իսկական աշխատանքի հրավիրված լինելու մասին, և ճաշելուց հետո շտապեց միևնույնություն, թեև դեռ շատ վաղ էր:

Տարբեր ապրումներ ունեին նաև բանվորները:

Դուրս գալով արհեստանոցից, վարպետ Վարդանը և ուստա Առաքելը քայլեցին միասին: Ամբողջ ճանապարհին նրանք վրդովված թքում էին ու թքում, մինչև որ միլիցիոները նրանց տուգանեց: Կանգ առնելով այն փողոցների անկյունում, որտեղ բաժանվում էին սովորաբար, նրանք շարունակեցին խոսակցությունը:

— Լավ արեց Գարեգինը,— ասաց վարպետ Վարդանը:

— Ոչ, լավ արեց,— հակաճառեց Առաքելը:

— Դե ես էլ այդ եմ ասում, որ լավ արեց,— ասաց առաջին ծերունին:

— Ոչ, քու ասած «լավն» ուրիշ է, իմ ասածը՝ ուրիշ,— բացատրեց երկրորդը:— Դու ասում ես՝ լավ արեց, որ վարկաբեկեց արհեստանոցը, իսկ ես ասում եմ՝ լավ արեց, որ դրանով փրկեց իսկական արհեստանոցների պատիվը: Դու դա հասկանո՞ւմ ես:

— Էհ, Առաքել, իհարկե հասկանում եմ: Չլինի՞ մտածում ես, թե ծերությունից խելքս թռցրել եմ: Դու չես թռցրել, իսկ ես թռցրե՞լ եմ:

— Ինչո՞ւ, ես քեզանից մե՞ծ եմ:

— Իհարկե մեծ ես:

— Ո՞վ ասաց: Ինձ որ հարցնես՝ դու ես մեծը:

— Ե՛ս. . .

— Բա էլ ո՞վ:

— Երկուսս էլ մեծ ենք,— հառաչեց Վարդանը:— Այսինքն՝ ցնդած ծերուկներ: Այդպես որ չլիներ, մինչև հիմա մատների արանքով չէինք նայի այդ ամենին: Դու հո սկզբից նկատո՞ւմ էիր, որ դա խաղ է և ոչ թե աշխատանք. . .

— Նկատում էի, Վարդան, բայց այսպես էի մտածում՝ մենք ծերացել ենք, մեզ համար այս խաղ-աշխատանքն էլ մի բան է: Գոնե որոշ օգուտ տալիս ենք:

— Բա տղանե՞րը:

— Դե նրանք էլ դեռ անփորձ են, փորձ էին ձեռք բերում: Կգար ժամանակը, կգնային իսկական գործի. . .

— Բա Արամայի՞սը, Սուրեն՞ը. . .

— Արամայիսն ի՞նչ, վնաս հո չէ՞ր անում, իր գյուտի դետալներն էր տաշում: Վաղը պետությանը մեծ օգուտ կտա: Իսկ Սուրենը, ճիշտը որ խոսենք, միակ իսկական աշխատողն էր արհեստանոցում, տոտիկների տեղերն էր ծակում, տոտիկներն էր չարխում:

— Բա Վարդ-Թորոսյանը. . .

— Այ, նա արդեն՝ թյո՛ւ. . .

Առաքելը թքեց փողոցի անկյունում դրված աղբարկղի մեջ: Այնտեղ թքեց նաև Վարդանը, և նրանք բաժանվեցին:

Ծերուկներն ընդհանուր առմամբ ճիշտ էին բնորոշել արհեստանոցի մյուս բանվորների կեցությունն ու մտածելակերպը: Վաչագան Թորոսյանն ու Դատավորը, որ նույնպես միասին էին քայլում, մինչև տուն հասնելը վճռեցին ամեն ինչ: Վաչագանը հայտարարեց, որ արհեստագործական դպրոցում սովորելիս նա շատ ավելի դժվար դետալներ է տաշել, քան այն հիմար սկավառակները, որոնցից շատերը բոլորովին կարիք էլ չէին զգում կտրիչի: Հենց վաղվանից նա կինոյի ազատել իրեն և կգնա մի ուրիշ արհեստանոց՝ իսկական աշխատանքի: Իսկ Դատավորը հայտարարեց, որ նա արդեն դիմում է տվել Ֆիզկուլտուրայի դպրոցին և շուտով ընդունվելու է այնտեղ: Մի քանի օր հետո կսկսվեն պարապմունքները. . .

Գյուտարար Արամայիսը քայլում էր մենակ: Բայց դա այն մենակությունը չէր, որով նա ապրել էր արհեստանոցում իր բոլոր օրերը՝ իր գյուտով կլանված, շրջապատի վրա ուշադրություն չդարձնելով: Այժմ նա մենակ էր քայլում, որովհետև մտածում էր այն մենակության մասին:

Ինչպե՞ս էր կարողացել նա՝ կոմերիտական, ակտիվ քաղաքացի, այնքան տարվել իր գյուտով, որ չէր նկատել, թե ի՞նչ էր կատարվում իր շուրջը: Բայց ոչ, շատ լավ էլ նկատել էր, բայց ուշադրություն չէր դարձրել, կարևորություն չէր տվել: Մանավանդ որ, դրանից նրա գյուտը մշակելու գործը շահում էր և ոչ թե տուժում: Եվ նա, հանուն այդ գործի, հանդուրժել էր արհեստանոցի վիճակը. . .

Ամենից ավելի հանգիստ խիղճ կարող էր ունենալ Սուրեն Մինասյանը, որովհետև նա, իրոք, միակն էր, որ ամբողջ ժամանակ արհեստանոցում աշխատել էր իսկական աշխատանքով:

Սակայն ամենից ավելի նա էր տանջվում խղճի խայթից: Առաջին անգամ իր կյանքում նա զգում էր, որ սխալ էր ապրել իր ամբողջ կյանքը՝ լինելով հիմարության աստիճան բարի և անձնագրի:

Այո, այդ երկու ազնիվ զգացմունքներն էլ կարող են լինել ավելորդ, անօգուտ, նույնիսկ վնասակար, նայած թե որտե՞ր կամ ո՞ւմ վերաբերյալ են արտահայտվում դրանք:

Մի՞թե հենց սկզբից նա չէր նկատել, որ արհեստանոցում իսկական աշխատանքով զբաղված է միայն ինքը, իսկ մյուսները, այսպես ասած, զուլխ են պահում: Նկատել էր և բարեհոգաբար ձեռք էր թափ տվել: Նույնիսկ այն ժամանակ, երբ Դատավորն սկսել էր հումքի միջից ջոկել ոչ մի մշակության կարիք չզգացող սկավառակներն իր համար՝ ուրիշներին թողնելով այնպիսիները, որոնք պահանջում էին գոնե որոշ մշակում, նա մտքում ներել էր նույնիսկ նրան:

Իսկ այժմ նա տեսնում էր, որ լինելով բարեհոգի ու ներողամիտ, նա վնասել էր ոչ միայն իրեն, այլև նրանց: Վարժեցրել էր նրանց պարապության. . . Եվ, իհարկե, վերջին հաշվով վնաս էր հասցրել նաև պետությանը: Ի միջի այլոց, Վարդ-Թորոսյանի մեղքն այդտեղ ավելի էր, քան իրենը:

Գնալով դեպի տուն, նա զգում էր, որ իր մեջ կատարվել է մի շատ մեծ բեկում: Նա այլևս չի կարող գոհանալ նրանով, որ ինքն աշխատում է ազնիվ: Վաղվանից նա պահանջելու է,— այո, այո, նա՝

բարեհոգի ու զիջող Սուրեն Մինասյանը, պահանջելու է, որ բոլորն էլ աշխատեն իր պես կամ բոլորն էլ հեռանան. . .

Ամենածանր կացությունը, իհարկե, Վարդ-Թորոսյանինն էր:

Գնալով տուն, «Կենցաղային սկավառակների» գործարանային տիպի արհեստանոցի վարիչը փակվեց իր սենյակում՝ առանց ճաշելու, առանց տնեցիներին որևէ բան ասելու, սկսեց մտածել: Այն պահից, երբ Գարեգինը կաբինետում առաջարկել էր նրան՝ խոսել միմյանց հետ ինչպես խորհրդային քաղաքացին խորհրդային քաղաքացու, խոսակցությունն ընդհատվել էր համարյա անմիջապես: Գարեգինը նրան անվանել էր ֆոկլոսնիկ, կեղծարար, և Վարդ-Թորոսյանը ոչ միայն սարսափելի վիրավորված ու զայրացած, այլև ուրախացած, որ հնարավորություն է ստանում խոսակցությունն ընդհատելու՝ Դիմացինի կոպտության պատրվակով, վեր էր կացել և առաջինս ինքն էր դուրս ելել կաբինետից:

— Այդ դեպքում մենք կխոսենք շատ ուրիշ ընկերների ներկայությամբ, — սպառնացել էր Գարեգին Սարոյանը և հեռացել:

Փակելով արհեստանոցի դուռը, վարիչն շտապել էր տուն՝ իր սենյակում առանձնանալու և ըստ երևույթին մինչև լույս մտածելու համար:

Այժմ նա գտնվում էր, որ խոսակցությունը նոր բանվորի հետ, ճիշտն ասած, բոլորովին էլ չէր ընդհատվել, այլ ավարտվել էր: Սպառիչ պարզությամբ այնտեղ ասվել էր ամեն ինչ, ասվել էր այն մի բառով. . .

Որ ինքը՝ Վարդ-Թորոսյանը կեղծարարությամբ էր զբաղվում՝ նա գիտեր բոլորից էլ լավ: Բայց թե ինչպես էր հասել դրան՝ ահա հենց այդ մասին էր նա մտածում:

Արհեստանոցը Վարդ-Թորոսյանին հասել էր պատրաստի վիճակում, երբ կեղծարարությունն այնտեղ արդեն կազմում էր արհեստանոցի գոյության գլխավոր հիմքը: Վարդ-Թորոսյանը, — նա շատ լավ է հիշում, — նկատել էր այդ «հիմքը» և զայրացած որոշել էր վերացնել այն: Բայց նա դրանից հանել էր ոչ թե այն եզրակացությունը, որ «հիմքի» վերացման հետ միասին պետք է վերանար նաև արհեստանոցը, այլ որ նրան պետք էր տալ մի ուրիշ, ավելի ազնիվ հիմք: Եվ նա, իր վարիչության համարյա ողջ ժամանակամիջոցում, համենայն դեպս՝ սկզբնական շրջանում, փնտրել էր այդ հիմքը: Դրան ապացույց՝ և երեխաների սայլակների անիվները, և բեռնակիրների սայլակների անիվները. . .

Իսկ այնուհետև. . .

Իսկ այնուհետև նրա գլուխը պտտվել էր Միավորման լավագույն արհեստանոցի վարիչի հռչակից, քանակային որակային բոլոր ցուցանիշներով առաջին տեղը գրավող արտադրական ձեռնարկության ղեկավարի հռչակից: Միավորման ղեկավարների բարեհոգության օգնությամբ, իրեն վստահված արհեստանոցի բանվորների ու ծառայողների շատ փոքրիկ կոլեկտիվի հանդուրժողականության պայմաններում, նա նվաճել էր, այո, այո, արդարացի կերպով նվաճել էր կեղծարարի անունը. . .

— Կոլեկտիվ. . . — լսելի ձայնով, վիրավորված ու զայրացած, հանկարծ արտասանեց նա՝ գոհանալով, որ վերջապես գտավ, թե ում վրա գցի մեղքը: Եվ ավելացրեց լացակումած ձայնով, ինչպես Սիոնի աղքատ, — իսկ ինչո՞ւ կոլեկտիվը չէր ուղղում ինձ. . . Այսինքն՝ ոչ թե ինձ, այլ իմ սխալները. . . Այսինքն՝ ոչ թե իմ ճիշտ աշխատանքի սխալները, այլ այն, որ ես ամբողջովին սխալ էի աշխատում. . .

Բայց նույն րոպեին իր ներսում, ինչ-որ հեռու, շատ հեռու տեղում, ֆոկլոսնիկության ու կեղծիքի, բյուրոկրատիզմի ու անպատասխանատվության և էլի ուրիշ շատ արատներից կազմված սարերի ետևում, նրա հոգում խոսեց նրա խղճի ինչ-որ ողորմելի մացորդը: Խոսեց՝ անկախ նրա ցանկությունից, նույնիսկ հակառակ այդ ցանկության: Ինչպե՞ս կարելի է մեղադրել կոլեկտիվին, որը մի քանի անգամ բարձրացրել է իր ձայնն արհեստանոցում տիրող բարքերի դեմ: Բայց ուրիշ ո՞վ, եթե ոչ Վարդ-Թորոսյանն ինքն է հարձակվել այդ կոլեկտիվի վրա իր ֆրագներով, սպառնալի՝ ինչպես հրացան, որի մասին չգիտես, որ դատարկ է.

— Թող հայտնի լինի որոշ պատուհաս-բանվորների, որոնք իրերին ու երևույթներին նայում են միայն իրենց հաստոցների ետևից՝ չկարողանալով ամբողջ ծավալով ընդգրկել դրանք, այսինքն՝ ոչ թե հաստոցները, այլ երևույթները, թող հայտնի լինի նրանց, որ արտադրությունը մի բարդ մեխանիզմ է: Մեխանիզմ, որը բարդ է նույնիսկ այն ժամանակ, երբ արտադրվում են միայն կենցաղային սկավառակներ: Այստեղ է թաղված շան գլուխը: Շան գլուխ, որը չեն տեսնում որոշ ընկերներ: Այո, արտադրությունը մի բարդ մեխանիզմ է, որը պետք է ղեկավարել, ընդ որում ղեկավարել միանձնյա, — մի սկզբունք, որն ընկած է արտադրության կազմակերպման մասին ունեցած մեր հայացքների հիմքում: Հիմք, որ անխախտ է: Հետևաբար, մենք թույլ չենք տա ոտնակոխել այդ սկզբունքը, որից հրաժարվելը մեզ կհասցնի կրախի՝ բառի լիակատար իմաստով, որովհետև չի կարելի փոքրիկ թերությունների ետևում չտեսնել մեծ նվաճումները: Հի կարելի, ընկերներ, շեշտը դնել այն բանի վրա, ընկերներ, որ որոշ ընկերներ, ընկերներ, հնարավոր են համարում, ընկերներ, ավելի ևս բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, ընկերներ:

Չի կարելի դրա վրա դնել շեշտը: Շեշտ, որը թույլ չի տալիս մտածել վաղվա օրվա մասին, երբ մենք, ես կասեի՝ կարող ենք մնալ առանց հուժկի, կամ այնքան հագեցնել բնակչությանը մեր սկավառակներով, որ շուտով ինքներս մեր արհեստանոցով կմանք առանց հագեցման և, ինչպես ասվում է նման դեպքերում, մնանք կոտրած տաշտակի առջև, ինչպես Պուշկինի այն պառավը, որը,— ես նկատի ունեմ Պուշկինին, ներեցե՛ք, պառավին,— որը ցանկանալով շատը, զրկվեց նաև քնից. . .

Այո, այդ ամենը եղել էր, և փոքրաթիվ կոլեկտիվը, չունենալով պարտիական կորիզ, չունենալով ուժեղ կամքի տեր մարդիկ, որոնք ընդունակ լինեին պայքարել Վարդ-Թորոյանի դեմ, չէր կարողացել «ուղղել» նրան:

Իսկ ինքը՝ Վարդ-Թորոյանը. . . Ինքն ինչպե՛ս: Չլինի՞ նա չէր գիտակցում իր արածը. . .

Ինչպե՛ս վարվել. . .

Վարդ-Թորոյանը չէր վախենում այդ հարցն իր առաջ դնելուց և չէր էլ վախենում պատասխանը որոնելուց: Բայց որքան էլ որ որոնում էր, չէր կարողանում գալ որևէ որոշման:

Ամենաճիշտը, իհարկե, կլիներ այն, որ նա վաղը գնար մարդկանց մոտ և բացեփառ ասեր. «Ես կեղծարար եմ»: Բայց նա սարսափում էր լույս միայն այդ մտքից: Հանձն առնել կարելի է սխալները և մասնակի մոմենտները՝ փրկելու համար հիմնականը: Բայց հանձն առնել ամբողջը. . . Ոչ, դա վեր էր նրա ուժերից: Դա հո կնշանակեր իսկական խայտառակություն. . .

Մյուս կողմից նա գիտեր, որ անհնար էր այլևս շարունակել կեղծարարությունը,— ամեն ինչ բացվել էր. . .

Չհանգելով ոչ մի որոշման, նա այդպես էլ քնեց՝ դեպքերը թողնելով իրենց ընթացքին: Միակ ազնիվ միտքը, որին նա հանգեց, այն էր, որ նա այլևս բարկացած չէր Գարեգին Սարոյանի վրա:

Ընդհակառակը, նույնիսկ շնորհակալ էր, որ նա վերջ տվեց արհեստանոցի վնասակար ու վտանգավոր խաղին, որից ամբողջ ժամանակ որոշ ենթագիտակցական տագնապի մեջ էր եղել Վարդ-Թորոյանը՝ չնայած իր արտաքուստ երջանկությանը:

Թող լինի ինչ որ լինելու է...

#### 14

Քանի որ արհեստանոցի բանալին իր մոտ էր, Վարդ-Թորոյանն առավոտյան բոլորից ավելի շուտ շտապեց գնալ իր աշխատավայրը: Բայց երբ տեղ հասավ, Սիրական Համբարձումյանն արդեն այնտեղ էր: Երևում էր նույնիսկ, որ նա շատ վաղ էր եկել, որովհետև սպասելուց ձանձրացած, այժմ զբաղված էր արհեստանոցի ցուցանակի շուրջը եղած ծակերը հաշվելով:

Տեսնելով վարիչին, ծերունին շտապեց դեպի նա:

— Բարի լույս, Ավետիք: Ես երեկ, այն դեպքից հետո, շտապ վագ տվեցի նորից հուժք ճարելու. . .

— Վերջ տուր,— կտրուկ ընդհատեց Վարդ-Թորոյանը,— մեզ այլևս հուժք հարկավոր չէ:

Ծերունին շուտ քաշեց թեթևացած.

— Եվ չկա էլ, Ավետիք: Ու չի էլ լինելու: Դիրեկտորն ինձ ասաց, որ գործարանը որոշել է այլևս բաց չթողնել մեզ ոչ մի սկավառակ: Իրենց մոտից ուղղակի հանելու են վաճառքի: «Եթե,— ասում է,— որևէ սկավառակի պռունկները հարկավոր լինի բթացնել կամ գանազան խորհուրդությունները հարթել՝ դա ինքներս կանենք: Դրա համար կտրամադրենք մի հաստոց: Լիուլի կբավականացնի»:

— Ճիշտ է,— մտայն համաձայնեց Վարդ-Թորոյանը:— Լիուլի:

— Ճիշտը՝ ճիշտ է, Ավետիք, բայց դիրեկտորն այդ բանը չի մարսի: Կգնամ, ներկա կգտնվեմ նրանց առաջիկա արտադրական խորհրդակցությանը և հարց կդնեմ, թե ինչո՞ւ նա մինչև այժմ չէր անում այդ, ինչո՞ւ ուղիսիրոյոյ գնով վաճառում էր մեզ մի նյութ, որը կարող էր վաճառքի հանել գործարանն ինքը և ստանալ ավելի մեծ շահույթ. . .

Վարդ-Թորոյանը թախծոտ նայեց նրան և ոչինչ չասաց: Նա մտքում նախանձեց ծերունուն: Գտել է անմեղ դուրս գալու ելքը: Կքննադատի դիրեկտորին, ի միջի այլոց՝ նաև «Կենցաղային սկավառակների» արհեստանոցի վարիչին, և ջրից դուրս կգա բոլորովին չոր: Իսկ ի՞նքը՝ Վարդ-Թորոյանն ո՞ւմ մեղադրի. . .

Առաջինը հայտնվեց նոր բանվոր Գարեգին Սարոյանը: Նրան տեսնելուն պես Վարդ-Թորոյանի մեջ նորից բորբոքվեց գայրույթը նրա հանդեպ: Եվ իրոք, եթե նա ուշանար գոնե մի օրով, արդեն պարզված կլիներ արհեստանոցի համար այն, որ մեքենայական գործարանը հրաժարվում է հուժք մատակարարելուց, և «Կենցաղային սկավառակների» արհեստանոցը կփակվեր ինքնաբերաբար, առանց այսպիսի խայտառակ մերկացման. . .

Այնքան հաճելի էր աշնանային վաղ առավոտվա արևի տակ կանգնելն ստվերներով կտրատված բակում: Վարդ-Թորոյանը չէր շտապում բաց անել արհեստանոցի դուռը՝ մինչև որ բոլորը հավաքվեին: Իսկ երբ բոլորը հավաքվեցին, նա դարձյալ չշտապեց մտնել շենք և հրավիրել մյուսներին: Ի՞նչ պիտի անեին նրանք այնտեղ. . .

— Ի՞նչ ենք անելու այսօր,— բոլորի փոխարեն հարցրեց վարպետ Վարդանը:

— Արտադրական խորհրդակցություն,— վարիչի փոխարեն պատասխանեց Գարեգին Սարոյանը:

— Այդ դեպքում ես գնամ,— ասաց Արիստակես Թորոսյանը:— Օրվա վերջում կգամ, գործերը կհանձնեմ:

— Ո՛ր գնաք,— հանդիմանեց Նրան Նոր բանվորը:— Չէ՞ որ դուք էլ մինչև երեկ եղել եք այս արհեստանոցի աշխատակիցը: Դուք իրավունք չունեք այդպես հեռանալու: Գնանք սկսենք, ընկերներ. . .

## 15

Բազմահարկ այդ շենքի բնակիչները, մասնավորապես երեխաները, մինչև օրս էլ հիշում են «Կենցաղային սկավառակների» գործարանային տիպի արհեստանոցի գոյության այդ վերջին օրը: Այդ օրն արհեստանոցի կիսանկուղային հարկից լսվում էին այնպիսի գոռգոռոցներ, կարծես երկրաշարժի ստորերկրյա ցնցումների ձայներ լինեին դրանք: Ապա քրտնած դուրս վազեց Սիրական Յամբարձումյանը և մտնելով բնակարաններից մեկը, խնդրեց թույլ տալ խոսելու հեռախոսով: Հավաքելով Միավորման վարչության նախագահի համարը, նա ասաց միայն մի քանի տազնապալի բառեր.

— Հասե՛ք, արհեստանոցը ձեռքից գնում է. . .

Մի քանի րոպե հետո նրբանցքում կանգ առավ մի մարդատար մեքենա, և այնտեղից ցած իջան Միավորման ղեկավարները: Մտնելով բակ, նրանք հարցրին երեխաներին, թե որտե՞ղ է գտնվում իրենց Միավորման իրավասության տակ գտնվող արհեստանոցը: Ցույց տված դռնով նրանք շտապեցին ներս:

Արտադրական խորհրդակցության անկոչ մասնակից երեխաները խռնվել էին նրբանցքում գրասենյակի լուսամուտների մոտ: Ասֆալտե մայթի վրա պազած, նրանք ոչ միայն լսում էին, այլև բաց էին թողնում իրենց ռեպլիկները.

— Ճիշտ է, Առաքել պապի, դրանք հետամնաց հաստոցներ են, ես էլ գիտեմ:

— Որտեղի՞ց գիտես, Հրաչիկ, ինչո՞ւ ես սուտ խոսում:

— Իհարկե գիտեմ, Վաչիկ: Մեկը շվեդական է, երկուսը՝ անգլիական, մնացած չորսը. . .

— Ոչ թե մեկն է շվեդական, այլ երկուսը: Դատավորն է ասել: Ուզո՞ւմ ես իրեն հարցնենք:

Դատավոր, ա՛յ Դատավոր. . .

— Գժվե՛լ ես, ինչ է, նրանք խորհրդակցություն են անում, իսկ դու խանգարում ես:

— Տղաներ, լռեցեք, թե չէ լուսամուտները կփակեն, ոչինչ չենք լսի:

— Չեն փակի, շոգ է:

— Տղաներ, Սիրական պապին Նորից դուրս է գալիս: Տեսես ո՞ւր է գնում:

— Չլսեցի՞ր, ինչ է: Գնում է տեխնիկական հսկիչներին կանչելու:

— Ինչո՞ւ:

— Էլ ինչո՞ւ ես պագել, տեղ զբաղեցրել՝ եթե չես լսում: Թող ես գամ քո տեղը: Վարիչն ասաց. «Ոչ, հաստոցները դեռ կարող են աշխատել, բոլորովին էլ վտանգավոր չեն»: Իսկ այն Նոր բանվորը պատասխանեց. «Ոչ, վտանգավոր են: Աշխատանքի պաշտպանության տեսակետից գուցե վտանգավոր չեն, բայց դրանք բարոյապես զառամյալներ են և կլանելով վիթխարի աշխատանք, կարող են տալ միայն չնչին Էֆեկտ: Դրանով էլ հենց վտանգավոր են ու վնասակար»:

— Ի՞նչ է նշանակում բարոյապես զառամյալ:

— Չառամյալ բառը ես գիտեմ, Կարեն, դա նշանակում է՝ ծերունի:

— Ուրեմն վարպետ Վարդանը զառամյա՛լ է:

— Հը՞. . .

— Իհարկե «հը» կանես: Չէ՞ որ հենց Նոր Սուրեն քեռին ասաց. «Կեցցես, վարպետ Վարդան, լավ ելույթ ունեցար, ապացուցեցիր, որ ծերանալ՝ չի նշանակում զառամել»:

— Սպասեցեք, տղաներ, Էլի Վարդ-Թորոսյանին են մշակում:

— Դե նրան ամբողջ ժամանակ են մշակում:

— Բայց ես էլի չհասկացա, թե ի՞նչ է նշանակում զառամյալ: Այն էլ՝ բարոյապես: Չառամյալ՝ դա հայիոյանք է:

— Իսկ բարոյապե՛ս:

— Դա առանձին որ ասես՝ լավ բառ է, իսկ «զառամյալ»-ի հետ՝ շատ խիստ հայիոյանք է: Հանկարծ չգործածես:

— Իսկ ինչո՞ւ են հաստոցներին հայիոյում:

— Տղաներ, լռելո՞ւ եք վերջապես:

— Ոչ, ես ուզում եմ իմանալ, թե ինչո՞ւ են հաստոցներին հայիոյում:

— Չեն հայիոյում, այլ բնորոշում են, հասկացա՞ր: Բնորոշում են:

— Լռեցեք, տղաներ, լռեցեք. . . Լսեցի՞ք:

— Ի՞նչ:

— Վարդ-Թորոսյանին էլ բնորոշեցին:

— Նույն բառերո՞վ:

— Նույն:

Սենյակ մտավ Սիրական Յամբարձումյանը:

— Յիմա կգան,— ասաց նա:

Մի քիչ հետո, չգիտես ինչու, բոլոր ժողովականները վեր կացան և սկսեցին դուրս գալ սենյակից: Երեխաներից մեկը բացականչեց.

— Տղաներ, վազ տվեք բալ: Տեխնիկական հսկիչներն են եկել:

Երեխաների, խումբը սրարշավ նետվեց դեպի բակ, տեղ գրավեց բուն արհեստանոցի լուսամուտների մոտ: Ներսում գտնվողներից ոչ ոք ուշադրություն չէր դարձնում նրանց վրա, և նրանք անարգել մասնակցում էին դեպքերի ամբողջ ընթացքին:

Մինչդեռ հսկիչները հաստոցներն էին ստուգում՝ մարդկանցով շրջապատված, Դատավորը մոտեցավ արհեստանոցի լուսամուտներից մեկին, իսկ Վաչագանը՝ մյուս, ինտերվյու տալու համար, և երեխաների հետաքրքրասեր ամբոխն սկսեց հարցերի տարափ տեղալ նրանց գլխերին:

— Մեր արհեստանոցին՝ գոյ, — ձեռքը թափ տվեց Դատավորը:

Մի քիչ հետո ժողովականները վերադարձան գրասենյակ: Հսկիչները գրավոր տվեցին իրենց եզրակացությունը հաստոցների մասին: Միավորման ղեկավարներն արձանագրություն կազմեցին արհեստանոցի սարքավորման լրիվ ամորտիզացիայի մասին և ստորագրեցին: Աստղիկը վերցրեց արձանագրությունը, նստեց Էլեոնորայի մոտ, սկսեց թելադրել: Էլեոնորան՝ տգեղ բերանով, սկսեց մեքենագրել: Երկար ամիսներ չաշխատելուց նրա մատները ետ էին վարժվել, և նա մեքենագրում էր դանդաղ, մեծ դժվարությամբ, թեև անցյալում վատ մեքենագրուհի չէր եղել: Հաշվելով օրական մի բառ, որքան որ նա մեքենագրում էր ամիսներից ի վեր, այդ արձանագրությամբ նա կատարեց ութ ամսվա և քսանչորս օրվա աշխատանք:

Երեխաները, նրբանցքում պազած, շարունակում էին լարված ուշադրությամբ հետևել խորհրդակցությանը, երբ հանկարծ նրանցից մեկը պատահաբար ետ նայելով, բղավեց ուրախ զարմանքով.

— Տղաներ, նայեցեք այս կողմ. . .

Բոլոր երեխաները շուռ եկան և նայեցին: Թեև նրանք շատ բան էին տեսել իրենց առայժմ փոքրիկ կյանքում, բայց այդպիսի բան դեռ չէին տեսել, ազնիվ պիոներական խոսք. . .

Նրբանցքն այլևս չկար: Ձգվել էր մի ընդարձակ ու երկար փողոց՝ երկու կողմերում բազմահարկ շենքերով, խանութներով, վերին հարկերի պատշգամբներով... Ջնջվել էին դեռ նախորդ օրը և ամբողջ գիշերը քանդվող խրճիթների վերջին հետքերը, հեռացել էին դրանց հողով ու խիճով բարձրված վերջին բեռնատար մեքենաները: Այժմ բանվորներն ավարտում էին դիմացի մայթի ասֆալտապատումը: Ասֆալտով լի երկու բեռնատարներ թափեցին իրենց բեռն ու գնացին:

Մոտեցավ երրորդ բեռնատարը՝ ինչ-որ ժանգոտ ու ծռմված երկաթի կտորտանքով լի: Հողից ու խճերից շինված խրճիթների հազվագյուտ երկաթե դետալներն ու պատկանելիքներն էին դրանք՝ կտորտված չուգունե վառարան, քանդվել սպառնացող պատերից մեկին տարիներ շարունակ դեմ արված գերանների երկաթե կապաններ, բակերում ցանված բանջարանոցները հավերից պաշտպանելու համար դրված երկաթե ցանկապատեր, որոնք իրենցից ներկայացնում էին շտամպած դետալներից մնացած ծակոտեն մետաղաթերթեր՝ եռանկյունի, լուսնաձև, կլոր և ուրիշ տեսակի անցքերով:

Երբ մեքենան, հասնելով բազմահարկ շենքի ծանոթ դարպասին, ուզում էր թեքվել դեպի մյուս փողոցը, բակից դուրս վազեց Սիրական Յամբարձումյանը և բղավեց.

— Կանգնիր. . .

Մեքենան կանգ առավ: Սիրականը վազեց ներս: Քիչ հետո արհեստանոցի բանվորները, ոտքերն զգուշությամբ փոխելով, ինչպես դաշնամուր փոխադրելիս, բակից դուրս բերեցին «Կենցաղային սկավառակների» գործարանային տիպի արհեստանոցի նյութական ամբողջ բազան՝ բարոյապես ու ֆիզիկապես զառամյալ հաստոցները, և նետեցին մեքենայի վրա: Հաստոցները շատ ծանր էին, անճոռնի, մասամբ ծանգոտված: Փայլուն էին դրանց միայն տակերը՝ ցեմենտե պատվանդաններից հենց նոր պոկված:

Մեքենան սլացավ քաղաքից դուրս՝ դեպի ուտիլիտիայի բակը: Վերադառնալով նորից, նա տարավ մնացյալ չորս հաստոցները: Արիստակես Թորոսյանն ուրախ-ուրախ շտապեց դեպի իր նոր աշխատավայրը՝ մի անգամ ևս խոստանալով Աստղիկ Մարգարյանին՝ տեղավորել նրան իր մոտ աշխատանքի: Էլեոնորա Նորադուգեցյանը գնաց իր կորցրած կետ դրույքը գտնելու Միավորման մի այլ օբյեկտում: Ուստա Առաքելն ու վարպետ Վարդանը գնացին նարդի խաղալու և ընդհանրապես իրենց կյանքի մնացյալ մասն անցկացնելու կենսաթոշակ ստացող բազմավաստակ բանվորների պատվավոր հանգստի մեջ: Գարեգին Սարոյանը Սուրեն Մինասյանին և պատանի Վաչագան Թորոսյանին առաջարկեց իր հետ միասին աշխատանքի մտնել մեքենայական մի արհեստանոցում, որտեղ որակյալ բանվորների մեծ պահանջ կար, և նրանք վճռեցին հենց իսկույն գնալ այնտեղ: Դատավորն շտապեց ֆիզկուլտուրայի դպրոց: Գյուտարար Արամայիսին շտապ կերպով հրավիրել էին Չելյաբինսկ՝ իր գյուտն այնտեղ գործարանային մասշտաբով կիրառելու համար:

Մնացին Ավետիք Վարդ-Թորոսյանը և Սիրական Չամբարձումյանը: Վերջինս որոշել էր չսպասել մեքենայական գործարանի արտադրական խորհրդակցության օրվան, այլ հենց այսօր գնալ դրա դիրեկտորի մոտ և քննադատել նրան: Այո, քննադատել անաչառ, օբյեկտիվ, ապա աշխատանք խնդրել նրանից:

Նրա գնալուց հետո Վարդ-Թորոսյանը մնաց մենակ: Բայց չէր կարելի ասել, թե բոլորովին մենակ: Նրա հետ էին նաև Միավորման ղեկավարները: Բայց նրանք բոլորն էլ, թեև միասին կանգնած՝ գրասենյակի մեջտեղում, մենակ էին: Մենակ էին, որովհետև նրանցից յուրաքանչյուրը մեղքը զգում էր մյուսների վրա, պաշտպանում էր իրեն, միայն իրեն, և այդ գործում նա, իհարկե, միանգամայն մենակ էր: Ապա նրանք վիճելով ու կռվելով դուրս ելան արհեստանոցից: Վարդ-Թորոսյանը, զրկված իր Թորոսյաններից, զրկված ընդհանրապես ամեն ինչից, փակեց դատարկ կիսանկուղի դուռը և շարունակելով գոռգոռալ իր ղեկավարների վրա, որոնք իր ժամանակին չէին ահագանգել, չէին զգուշացրել նրան, չէին շտկել և այլև, և այլև, քայլեց դեպի Միավորում, որտեղ նրանց սպասում էր վարչության նիստը:

Իսկ երեխաները, այլևս ոչ մի ուշադրություն չդարձնելով ո՛չ նրանց, ո՛չ նախկին արհեստանոցի վրա, մոռացած նույնիսկ իրենց ամենօրյա ֆուտբոլը, նայում ու նայում էին և չէին կարողանում կշտանալ զարմանալուց, թե ինչպես այդտեղ նրբանցք էր, իսկ հիմա դարձավ փողոց:

1953